22-28 ՄԱՅԻՍ 2026 ՈՒՐԲԱԹ 018(5886)

Azg Վազ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կաթոլիկական ՁԼՄ-ներում ընդգծվում է Արամ Ա-ի՝ Վատիկանի 3-րդ համաժողով հրավիրելու առաջարկը

«Վատիկան նյուզը», Գերմանիայի, Շվեյցարիայի, Ավստրիայի կաթոլիկական ՁԼՄ-ները մայիսի 20, 21-ին անդրադառնում են Վատիկանում մայիսի 18-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի եւ Հռոմի պապ Լեւոն XIV-ի հանդիպմանը, ընդգծում, որ մայիսի 20-ին Ս. Պետրոսի հրապարակում հերթական հրապարակային ունկնդրության ժամանակ Հռոմի քահանայապետի կողքին նստելը հարգանքի՝ կաթողիկոս Արամ Ա-ի էկումենիկ նվիրվածության ընդգծում է: Նշված ՁԼՄ-ներում առավել կենտրոնացած են Արամ Ա-ի՝ Վատիկանի 3-րդ համաժողով հրավիրելու առաջարկին եւ հղում տալով նաեւ Cilicia TV-ի ֆբ էջին նշում մյուս 2 թեմաները՝« Զատկուան միացեալ թուականի ճշդում, բոլոր նահատակներու յիշատակութեան օր»:

⇨6

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Նիկոլի թիթեղյա Հայաստանը...

8 տարի առաջ ցանված ատելության սերմերը օրեցօր ծիլ ու բողբոջ տալով՝ այժմ արմատ են գցել եւ առատ, շա՜տ առատ բերք են տալիս՝ թունավոր պտուղներով առլի: Դա ամենօրյա, տքնաջան աշխատանքի արդյունք է, ներքին էությունից բխող եւ արտաքին մասնագիտական հմտությամբ կատարելագործված «այգեպանի» տքնության արդյունք:

Նախընտրական այս օրերին հատկապես, ատելության այդ թույնը ներարկվում է եւ տարածվում տարբեր ձեւերով՝ իբր պատահաբար ընտրված խանութ կամ աշխատատեղ այցելությամբ, հասարակական տրանսպորտում թիկնապահների ու նկարահանողների ուղեկցությամբ, փողոցներում ու բակերում իբր անմիջական եւ անբռնազբոս զրույցի բռնվող, զրուցակիցներին «թիթեղյա Հայաստան» նվիրող, երկու ձեռքի մատներով իբր իր սիրտն անգամ ժողովրդին նվիրող այլանդակ կերպարը, որին վերեւում «այգեպան» կոչեցի: Նա ամեն, ամեն տեղ բացում է թունոտ բերանը եւ ջանում իր խոպոտ ձայնով ատելավառ «պատգամներ» հղել բոլորին, նույնիսկ նրանց՝ ովքեր դեմ են կամ համաձայն չեն իրեն, վերջիններին վերապահելով «համբալ», «լակոտ» ու գռեհիկ այլ բառերի կույտը:

Աշխարհում ո՞վ է տեսել նախընտրական այսպիսի քարոզարշավ՝ երկիր ղեկավարողի, երկիր ներկայացնողի կողմից թելադրվող: Ո՞վ է տեսել իր քաղաքական մրցակիցներին վիրավորելու, անարգելու, զրպարտելու նման շքահանդես: Ոչ ոք, գեթ քիչ թե շատ զարգացած, քիչումիչ ռամկավարական երկրում նման ընտրարշավ ո՞վ է տեսել, անգամ լսել, հայհոյանքներով, ես կասեի՝ քֆուրներով առլցուն: Դա անսուտ ցուցիչն է տվյալ երկրի քաղաքական, հասարակական ու հոգեւոր անառողջության, ներքին տկարության եւ դիմադրելու անկարողության:

Ու, պարզվում է, որ մենք ունենք հիվանդ, ավելի ճիշտ՝ հիվանդացած հասարակություն: Գիտենք հիվանդացնողին, որին, սակայն, հասարակության մի խումբ դեռեւս պաշտպանում է «Նիկոլ, վարչապետ» գոռում-գոչումներով, որոնց անունը ընդդիմության լրատվամիջոցները դրել են «զոմբիներ», այսինքն՝ ուղեղազուրկ արարածներ, ինչը նույնպես նշան է անկարողության, այս անգամ՝ ընդդիմության կողմից:

Համաձայն չեմ նրանց հետ: Մեր ժողովրդի մի հատվածը, կին թե տղամարդ, նույնպես վարակված են ատելության սինդրոմով, ենթակա՝ տխրահռչակ Հ1 եւ ձայնակից՝ իշխանական այլ լրատվամիջոցների ազդեցությանը:

Գիտեմ, այս օրերին բազմաթիվ են քննադատական սլաքներն ուղղված ընդդիմությանը: Սակայն, խոստովանենք, վերջինս ի՞նչ կարող էր անել ընդդեմ համավարակի: Նույն անձը, որին գեղեցիկ բառով ներկայացրի որպես «այգեպան», լաչառությամբ կարողանում է գերազանցել բոլորին, խաբել, մանիպուլացնել, ձեռնածության ենթարկել ատելավառ իր արտահայտություններով, որոնց անցնող մի քանի օրերին Արաբկիր թաղամասում, Արմավիրում եւ այլուր, թեկուզ ոստիկանական յուրային վարձկանների խմբով ձայնակցում էին «Նիկոլ, վարչապետ» հենց այն պահին, երբ Փաշինյան կոչեցյալը, 5000 տարեկից եղբայրների զոհվելու, Արցախը հանուն իր իշխանության ծախելու վերաբերյալ հայրենազրկված երիտասարդի հարցին ի պատասխան հարց էր տալիս՝ «Լակոտ, իսկ դու խի՞ ես ապրում» եւ ավելացնում. «Դու եւ քո նմանները, դո՛ւք պիտի բացատրություն տաք, թե ինչո՞ւ եք կենդանի», այսինքն՝ չզոհված, այսինքն՝ Արցախյան շարժում դեռ շարունակողներ:

Այո, որքան էլ որ ամոթալի է, պետք է արձանագրենք, որ Նիկոլի համար լավագույն արցախցին զոհված, սպանված արցախցին է:

Ատելության նման խոսք, հիշեցնեմ, կարող էր հնչել միայն ստալինյան ժամանակաշրջանում, համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, երբ, որոշ զորամասերում, կարմիր բանակայիններին ձերբակալում եւ Սիբիր էին ուղարկում գերմանական հարձակումներին դիմացած ու վերապրած լինելու համար:

Եվ այդ բոլորի դիմաց՝ ամենատարօրինակը, ամենատխուրը՝ ծափահարություններն էին մեր ժողովրդի այն՝ անխելք խավի ներկայացուցիչների, որոնք շարունակում են գոռգոռալ՝ «Նիկոլ, վարչապետ»:

Ատելության սերմնացանը սերմերը շատ խորն է գցել «սեւ ցելերի» տակ: Նա անկեղծորեն եւ անթաքույց ատելություն է տածում դեպի արցախցին, դեպի իր հայրենիքը պաշտպանող զինվորը, դեպի եկեղեցին, դեպի Արարատը, դեպի ազգային ինքնությունը, դեպի ընտրական մրցակիցները, դեպի իր կարծիքը չկիսողները, դեպի...

Այս մարդու առաքելությունը սա՛ է՝ պառակտել, կիսել, հակադրել, ատելավառ զգացմունք ներշնչել իր ժողովրդին, նրան սովորեցնել հակաքրիստոնեական պատգամը՝ «Ատեք զմիմեանս», փոխանակ քրիստոսավայել՝ «Սիրեք զմիմեանս» աստվածատուր խրատի:

Սրա անունը ազգային ավերածություն է, այսինքն՝ թիթեղյա Հայաստան...

Հանդուրժելո՞ւ ենք այս բոլորը:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Համբալները, լրտեսները, դավաճանները եւ ստահակները. նախընտրական բառապաշարի ուրվագիծ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արժանին պետք է մատուցել մեր քաղաքական ուժերին, որոնք «անմոռանալի» եւ «անզուգական» այս ընտրարշավին իրենց բառապաշարով, իրենց ոչ կոնվենցիոնալ խոսույթով ու պահվածքով ամեն ինչ անում են, որ մենք մեզ զգանք ոչ թե Հայաստանում, այլ վիրտուալ «համբալստանում»: Ու գիտակցում են դա նրանք, թե ոչ՝ նրանց խոսույթն ընտրողի մոտ այնպիսի սրտխառնուք է առաջացնում, որ ընտրազանգվածի զգալի մասը կարող է առհասարակ հունիսի յոթին քվեատուփին չմոտենալ:

Շարունակեք նույն ոգով վերջին բառերով միմյանց նախշել, ի ցույց դնել ձեր ներսի «մաքրությունը»՝ այդպիսով դրդելով նորմալ, դաստիարակված մարդկանց մտածելու.«Սրա՞նք են իմ երկրի քաղաքական գործիչները, սրա՞նք են երկրի ղեկին հավակնում, այս աստիճանի աղքա՞տ է մեր ազգը, որ սրանց ունի, ավելի լավ է՝ սրանց չունենալ»: Ու այսպես մտածելուց հետո ինչո՞ւ պիտի նորմալ մարդն այն աստիճանի իջնի, որ գնա սրանց նմաններին ընտրի:

Ընտրական «համբալաբանական» խոսվածքը, վերջին լրտեսամանիան, «մասկի-շոուներն» ու «բռնեմ-նստեցնեմները» սպանում են ընտրողին , սպառնալով հունիսի յոթը վերածել չընտրության:

⇨3

«Հայերի կոտորածը սաքսոնական, սիոնիստական ու թուրանական առանցքի աշխարհաքաղաքական ծրագրերի լույսի ներքո»

«Ղարաբաղը մերը չէր». Փաշինյանի նոր քաղաքական ուղերձը

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ, Իրանում ՀՀ նախկին դեսպան

Կովկասի հարցերով իրանցի փորձագետ **Բորհան Հեշմաթիի** ուշադրությունից չի վրիպել ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի**՝ Արցախի պատկանելության մասին արված աղմկահարույց հայտարարությունը:

Հայ-ադրբեջանական հարաբերություններին ու Արցախյան հիմնահարցին նվիրված բազմաթիվ հոդվածների հեղինակ իրանցի վերլուծաբանը Արցախն ուրանալու մասին Փաշինյանի աննախադեպ հայտարարության խորքերը թափանցելու փորձ է կատարել եւ *Iranian Diplomacy* կայքում հրապարակել **«Հայերի կոտորածը սաքսոնական, սիոնիստական ու թուրանական առանցքի աշխարհաքաղաքական ծրագրերի լույսի ներքո»** խորագրով ուշագրավ հոդված:

Հեղինակը հետեւյալ հորդորանքով է դիմել վարչապետ Փաշինյանին.

«Պարո՛ն Փաշինյան, խնդրում ենք Լեռնային Ղարաբաղի հարցում մեծահոգաբար զիջումների մի գնացեք»:

Այս կոչով դիմելուց հետո, հեղինակը պատմական, իրավական ու քաղաքական փաստերն ի մի բերելով, համոզմունք է հայտնում, որ Նիկոլ Փաշինյանը չունի իրավական ու բարոյական լիազորություն՝ որոշելու Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը, անտեսելու տեղաբնակների իրավունքները եւ «մեծահոգաբար» նվիրաբերելու այն:

Հիշեցնելով Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի Հանրապետության մաս կազմելու մասին Իրանի պաշտոնական դիրքորոշումը, Բորհան Հեշմաթին այնուամենայնիվ Բաքվին իրավունք չի վերապահում հայաթափել Արցախը, ոչնչացնել այս տարածաշրջանի պատմական ու կրոնական ժառանգությունն եւ ոտնահարել հայերի իրավունքները:

Այնուհետեւ հոդվածագիրն անդրադառնում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ խորհրդարանական ընտրությունների շրջանակում անցկացված ընտրարշավի ժամանակ Սյունիքի Կոռնիձոր համայնքում ունեցած ելույթին եւ հնչեցրած աննախադեպ հայտարարությանը: Հեշմաթին հիշեցրել է կոռնիձորցիների հետ հանդիպման ժամանակ Փաշինյանի խոսքերը, թե «Արցախը ինչո՞վ է մերը եղել: Այնտեղ դպրո՞ց ենք կառուցել, մանկապարտե՞զ ենք կառուցել, գործարա՞ն ենք կառուցել, ապրե՞լ ենք էնտեղ: Ինչո՞վ ա մերը եղել»:

Հոդվածագիրը նաեւ մեջբերել է Փաշինյանի այն միտքը, որ 1988 թվականին սկիզբ առած Ղարաբաղյան շարժումը ճակատագրական սխալ էր, հավելելով, որ դրանով Փաշինյանը նույնիսկ գերազանցել է **Իլհամ Ալիեւին**:

Հրապարակման այս հատվածում Հեշմաթին ակնարկաբար անդրադարձել է Արցախի հիմնահարցին, նշելով որ Խորհրդային շրջանում Ղարաբաղը որպես ինքնավար մարզ ընդգրկված էր Խորհրդային Ադրբեջանի Սոցիալիստական Հանրապետության կազմում, միաժամանակ ընդգծելով Ղարաբաղի հայերի պատմական, մշակութային եւ կրոնական իրավունքները:

Հեշմաթին Նիկոլ Փաշինյանի վերը նշված հայտարարությունը, թե «Լեռնային Ղարաբաղը երբեք չի պատկանել Հայաստանին», գնահատել է տարբեր տեսանկյուններից.

⇨2

«Հայերի կոտորածը սաֆոնական, սիոնիստական ու թուրանական առանցքի աշխարհաքաղաքական ծրագրերի լույսի ներքո»

⇨1

1. Որպես Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյայի առաջին բացահայտ հայտարարություն

Սա առաջին դեպքն է, երբ Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյան բացահայտ եւ առանց դիվանագիտական վերապահումների հայտարարում է, որ Ղարաբաղը չի պատկանել Հայաստանին: Այս մոտեցումը ակնհայտ հակասության մեջ է այն քաղաքական գծի հետ, որը վերջին տասնամյակների ընթացքում որդեգրել էին Հայաստանի պաշտոնյաները, ինչպես նաեւ հենց ներկայիս վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախկին դիրքորոշումների հետ: Դա նաեւ հակասության մեջ է Երեւանի կողմից Ադրբեջանի դեմ ներկայացված հայցերը Միջազգային ատյաններում եւ Միջազգային քրեական դատարանում՝ Ղարաբաղի հայերի իրավունքների խախտման եւ 2018-2023 թվականներին Բաքվի կողմից ռասայական խտրականություն հրահրելու մեղադրանքների հետ:

2. Իբրեւ Ղարաբաղում հայերի ներկայության պատմական փաստերի խեղաթյուրում

Վերլուծաբանի կարծիքով, Փաշինյանի այս տեսակետը հակասում է Լեռնային Ղարաբաղում հայերի ներկայության վերաբերյալ պատմական իրողություններին, մեջբերելով հետեւյալ փաստերը.

ա) Պատմական եւ կրոնական հուշարձաններ. Դադիվանքի (9-13-րդ դարեր) եւ Գանձասարի (12-13-րդ դարեր) վանքերը, ինչպես նաեւ Շուշիի, Հադրութի եւ Մարտակերտի բազմաթիվ եկեղեցիներ վկայում են Ղարաբաղում հայերի բազմադարյա, իսկ որոշ վայրերում՝ ավելի քան հազարամյա ներկայության մասին:

բ) Հայկական եւ իրանական աղբյուրներ. Միջնադարյան աղբյուրներում Ղարաբաղը համարվել է Առանի (Հարավային Կովկաս) եւ Արմինիայի մի մաս, որտեղ բնակվել են հայեր եւ կովկասյան ալբանացիներ: Պատմության ընթացքում Ղարաբաղը եղել է Իրանի կազմում, իսկ Ղարաբաղի խանությունը (18-րդ դար) կառավարվել է իրանական ծագում ունեցող տոհմերի կողմից: Սակայն լեռնային շրջանների հայ բնակչությունն ունեցել է հարաբերական ինքնավարություն՝ մելիքության կամ խանության տեսքով:

3. Հակասություն Հայաստանի կառավարության քաղաքական եւ բյուջետային գործելակերպի միջեւ

Մի քանի տասնամյակ շարունակ Հայաստանի կառավարությունը տարեկան բյուջեում Լեռնային Ղարաբաղի համար նախատեսում էր առանձին ծախսային հոդված, ինչը փաստացի նշանակում էր, որ այն դիտարկվում էր որպես Հայաստանին առնչվող տարածք: Այս գործելակերպը պահպանվել էր նաեւ Փաշինյանի վարչապետության օրոք՝ Սերժ Սարգսյանի կառավարության հեռացումից հետո:

Հոդվածագիրը հավելում է՝ «Փաշինյանը 2024 թվականի ապրիլին Հայաստանի Ազգային ժողովում հայտարարել էր, որ իր կառավարությունը 2020-2023 թվականներին ընդհանուր առմամբ 538 միլիարդ դրամ է ծախսել Ղարաբաղի համար, ինչը մոտավորապես հավասար է 1 միլիարդ 300 միլիոն ԱՄՆ դոլարի»:

4. Փաշինյանի՝ Ղարաբաղի իրավական կարգավիճակի վերաբերյալ հայտարարություններ անելու իրավասության բացակայությունը

Հոդվածագիրը իրավական տեսանկյունից հարցադրում է անում. արդյո՞ք Փաշինյանն ընդհանրապես իրավասու է արտահայտվելու Ղարաբաղի ինքնության եւ պատմական պատկանելության մասին:

Երկրորդ Ղարաբաղյան պատերազմի ընթացքում Փաշինյանը բազմիցս հայտարարել էր, որ հակամարտության հիմնական կողմերն են Ադրբեջանի Հանրապետությունը եւ Լեռնային Ղարաբաղի հայերը: Այսպիսով, նա փաստացի ընդունում էր, որ ինքը լիազորված չէ Ղարաբաղի հայերի անունից որոշումներ ընդունելու:

5. Հակասություններ Փաշինյանի տեսակետներում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ

Մինչ այժմ Փաշինյանը Ղարաբաղի վերաբերյալ բազմաթիվ հակասական դիրքորոշումներ է արտահայտել, ինչը, ըստ հոդվածի, հարիր չէ ոչ միայն պետական գործչին, այլեւ նույնիսկ սովորական մարդու:

Այս հակասությունների պատճառով որոշ վերլուծաբաններ եկել են այն եզրակացության, որ նա գործնականում հանդես է գալիս որպես անգլոսաքսոնական աշխարհակարգի ենթակա գործակալ՝ առանց ինքնուրույն կամքի եւ քաղաքական անկախության, մասնակցելով մի աշխարհաքաղաքական նախագծի, որը ոչ միայն չի համապատասխանում Հայաստանի եւ հայության ազգային շահերին, այլեւ կարող է նոր աղետներ պատճառել հայ ժողովրդին:

6. Փաշինյանը՝ Սաակաշվիլիի եւ Զելենսկու «սաքսոնականացված» նոր տարբերակը

Հոդվածի հեղինակի կարծիքով՝ Փաշինյանի վարքագիծը Ղարաբաղի հարցում, հայրենիքի նկատմամբ պատկանելիության զգացումը մերժելու կամ այն մեծ տերությունների շահերին զոհաբերելու առումով, նման է Վրաստանի նախկին նախագահ **Միխեիլ Սաակաշվիլիի** եւ Ուկրաինայի նախագահ **Վլադիմիր Զելենսկու** քաղաքականության հետ:

Հոդվածագրի կարծիքով, Փաշինյանն էլ, **Իլհամ Ալիեւի** եւ **Ռեջեփ Թայիփ Էրդողանի** գովեստներին արժանանալով, գնում է նույն ճանապարհով եւ իր երկիրը կանգնեցնում նմանատիպ վտանգների առաջ:

7. Փաշինյանի դրդապատճառները Ղարաբաղի հայերի նկատմամբ «պատմական դավաճանության» հարցում

Հեղինակը հարց է բարձրացնում, թե ինչու հենց այս պահին Փաշինյանը նման հայտարարություններ է անում Ղարաբաղի՝ Հայաստանին չպատկանելու մասին, ինչը, ըստ հոդվածի, հավասարազոր է Բաքվի կողմից հայերի էթնիկ զտման արդարացմանը:

8. Անգլոսաքսոնա-սիոնիստական աշխարհաքաղաքականության համաձայնեցված բնույթը

Հոդվածագիրը պնդում է, որ Փաշինյանի հայտարարությունները լիովին համընկնում են ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ սիոնիստական շրջանակների աշխարհաքաղաքական ծրագրերի հետ Հարավային Կովկասում:

Ըստ հեղինակի՝ մինչեւ 2020 թվականի պատերազմը արեւմտյան երկրները ցուցադրաբար աջակցում էին Ղարաբաղի հայերին՝ որպես ճնշման միջոց Ռուսաստանի եւ Իրանի դեմ: Սակայն Ուկրաինայի պատերազմի բռնկումից հետո առաջնահերթությունը տրվեց Ադրբեջանի միջոցով Եվրոպայի էներգետիկ ապահովմանը:

9. Փաշինյանի «առատաձեռնության» ռազմավարական վտանգները

Ըստ հեղինակի, Փաշինյանը կարծում է, որ Ղարաբաղի հայերի իրավունքներից հրաժարվելով կարող է երկարատեւ խաղաղություն հաստատել Ադրբեջանի հետ եւ միաժամանակ Սյունիքում զիջումների գնալ «թյուրքական աշխարհի» նախագծերին: Սակայն, ըստ հոդվածի՝ այս աշխարհաքաղաքական զիջումները վտանգում են Հայաստանի գոյությունը որպես անկախ պետություն: Դա կարող է ապագայում հանգեցնել նոր ողբերգությունների, ընդհուպ՝ 1915 թվականի ցեղասպանության կամ 2023 թվականի Ղարաբաղի հայաթափման նման զարգացումների՝ արդեն Հայաստանի տարածքում:

10. «Երբեք» բառի մեկնաբանությունը Փաշինյանի խոսքում եւ Իրանի պատմական իրավունքները

Այստեղ առաջ է գալիս եւս մեկ կարեւոր հարց. ի՞նչ նկատի ունի Փաշինյանը, երբ ասում է՝ «Ղարաբաղը «երբեք» չի պատկանել Հայաստանին»: Ի՞նչ պատմական եւ իրավական փաստաթղթերի հիման վրա է նա անում այս պնդումը:

Հեղինակի դիտարկմամբ՝ հնագույն ժամանակներից սկսած՝ Լեռնային Ղարաբաղը եւ ամբողջ Կովկասյան տարածաշրջանը, ներառյալ Հայաստանը եւ պատմական Առանը (ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը), պատկանել են Իրանին: Աքեմենյանների, Արշակունիների եւ Սասանյանների ժամանակաշրջաններում Հարավային Կովկասը եղել է Իրանի տիրապետության կամ իրանական սատրապությունների կազմում: Իսլամական ժամանակաշրջանից հետո եւս Կովկասի խանությունները, այդ թվում՝ Ղարաբաղի խանությունը, մինչեւ Գյուլիստանի (1813 թ.) եւ Թուրքմենչայի (1828 թ.) պայմանագրերը, ընդգրկված էին Իրանի պետական կազմի մեջ:

Միայն ցարական Ռուսաստանի եւ խորհրդային իշխանության ժամանակաշրջաններում Ղարաբաղը դուրս է մնացել Իրանի անմիջական վերահսկողությունից: Սակայն նույնիսկ խորհրդային շրջանում Ղարաբաղը, գտնվելով Խորհրդային Ադրբեջանի կազմում, ուներ ինքնավար մարզի կարգավիճակ, ինչը, ըստ հեղինակի, պայմանավորված էր Ղարաբաղում հայերի պատմական բնակությամբ:

Հետեւաբար, հեղինակի կարծիքով, Փաշինյանը չունի ո՛չ իրավական, ո՛չ բարոյական իրավունք՝ այնպիսի հայտարարություն անելու, որի թաքնված իմաստն այն է, թե «Ղարաբաղը երբեք ոչ մեկին չի պատկանել, բացի Ադրբեջանից»:

Եթե Փաշինյանի ասած «երբեք»-ը վերաբերում է Գյուլիստանի եւ Թուրքմենչայի պայմանագրերից հետո ընկած ժամանակաշրջանին, երբ Կովկասը անջատվեց Իրանից, ապա նույնիսկ այդ դեպքում պետք է հաշվի առնել, որ Ղարաբաղը ցարական Ռուսաստանի եւ հետագայում Խորհրդային Միության կազմում նախ եղել է Ելիզավետպոլի նահանգի մաս, իսկ հետո՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ՝ Խորհրդային Ադրբեջանի կազմում:

Այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը երբեք չի ընդգրկվել Խորհրդային Հայաստանի կազմում, ըստ հեղինակի, չի կարող հիմք հանդիսանալ Արցախի պատմությունը խեղաթյուրելու համար: Նույնը վերաբերելի է Նախիջեւանին, որը մինչեւ 1920 թվականը Ադրբեջանի մաս չէր կազմել:

Հոդվածագիրը նաեւ նշում է, որ Երկրորդ Ղարաբաղյան պատերազմից հետո Հայաստանը եւ Ադրբեջանը որպես սահմանազատման հիմք ընդունել են խորհրդային շրջանի քարտեզները: Այս տեսանկյունից խորհրդային շրջանի Ղարաբաղի կարգավիճակի անտեսումը կամ «ջնջումը» ինքնին հակասական եւ անհետեւողական մոտեցում է:

Եզրահանգում

Հեղինակի եզրակացությամբ՝ պատմական, իրավական, քաղաքական փաստերը ցույց են տալիս, որ Նիկոլ Փաշինյանը չունի իրավական եւ բարոյական լիազորություն՝ Լեռնային Ղարաբաղը «մեծահոգաբար նվիրելու» կամ անտեսելու այդ տարածաշրջանի տեղաբնակների եւ պատմական տերերի իրավունքները:

Հոդվածում կրկին շեշտվում է Իրանի պաշտոնական դիրքորոշումը, ըստ որի՝ Արցախը հանդիսանում է Ադրբեջանի Հանրապետության տարածքի մաս, սակայն դա չի նշանակում, որ Բաքուն իրավունք ունի՝

- իրականացնել Ղարաբաղի էթնիկ զտում,
- ոչնչացնել տարածաշրջանի պատմական եւ կրոնական հուշարձանները,
- կամ խախտել հայերի իրավունքները:

Հեղինակը պնդում է, որ եթե ապագայում որոշում պետք է կայացվի տարածաշրջանի վերջնական իրավական կարգավիճակի վերաբերյալ՝ լինի դա Ադրբեջանի կազմում պահպանելը, Հայաստանի հետ միավորելը, իրանական պատակնելության հաստատումը կամ անկախությունը, ապա անհրաժեշտ է.

1. Ապահովել տեղահանված բնիկ հայ բնակչության՝ ավելի քան 120 հազար մարդու վերադարձը, որոնք 2023 թվականի սեպտեմբերից հետո տեղափոխվել են Հայաստան: Նրանց վերադարձը պետք է իրականացվի հնարավորինս արագ՝ միջազգային անվտանգության երաշխիքներով, միջազգային իրավունքի նորմերին եւ միջազգային կառույցների պահանջներին համապատասխան:

Միաժամանակ պետք է ապահովվի նաեւ այն ադրբեջանցի բնակիչների վերադարձը, որոնք լքել էին տարածաշրջանը 1980-ականների վերջի եւ 1990-ականների սկզբի առաջին Ղարաբաղյան պատերազմի ընթացքում:

Հեղինակը հատուկ ընդգծում է, որ որեւէ պարագայում չպետք է փոխվի տարածաշրջանի պատմական ժողովրդագրական կազմը՝ «անգլոսաքսոնական-սիոնիստական-թուրանական» նպատակների համար:

Քանի որ Ղարաբաղը խորհրդային շրջանում ունեցել է ինքնավար կարգավիճակ, ապա, ըստ հեղինակի, տեղաբնակների վերադարձից հետո Լեռնային Ղարաբաղում պետք է անցկացվի հանրաքվե՝ արդար եւ թափանցիկ պայմաններում, չեզոք միջազգային դիտորդների, այդ թվում՝ իրանցի դիտորդների վերահսկողությամբ, որպեսզի Ղարաբաղի տեղաբնակները՝ առանց ռազմական կամ անվտանգության ճնշման, իրենք որոշեն տարածաշրջանի վերջնական կարգավիճակը:

Հակառակ պարագայում, Բաքվի կողմից իրականացված Ղարաբաղի էթնիկ զտումը եւ դրա արդարացումը, հեղինակի ձեւակերպմամբ՝ «հայկական ծագում ունեցող կամակատար գործչի» միջոցով չի հանգեցնի հակամարտության տեւական լուծմանը:

Ամեն ինչ կորցրած արցախցիները հույսը դեռ պահպանում են, վերադարձի՛ հույսը

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Գերմանական կաթոլիկական Domradio-ն մայիսին մի քանի հրապարակմամբ անդրադարձել է բռնգաղթի հետեւանքով ՀՀ-ում ինտեգրվող արցախցիների խնդիրներին, որ վերադարձի հույսը փայփայելով, վիշտը հոգիներում դիմակայում են սոցիալ-հոգեբանական մարտահրավերներին: Գերմանացի կաթոլիկների արեւելաեվրոպական օգնության Renovabis միությունը, որ տարբեր երկրներում աջակցում է նեղյալներին սոցիալ եւ կրթության ոլորտներում, Հոգեգալստյան առաջիկա՝ մայիսի 24-ի տոնին ուշադրություն է բեւեռում արցախցիներին սատարելու առաքելությանը: Եղեգնաձորի համայնքային Community Development ՀԿ-ի միջոցով իրականացվող օգնությունը, նկարչության, պարի դասընթացները, աշխատատեղերի ստեղծումը փոքր-ինչ դարմանում է վտարանդի արցախցիների վիրավոր հոգին, որ թղթի վրա շարունակում են գծել Ղազանչեցոցը, իրենց հայրենի տունը... Renovabis-ի առցանց էջում ծավալուն ռեպորտաժներն «ամեն ինչ կորցրած մարդկանց մասին են, որ հույսը դեռ վառ են պահում»:

Renovabis-ի պաստառին արցախցի Անուշ Մարտիրոսյանն է, որ 2020-ին է բռնի տեղահանվել, այժմ պար է ուսուցանում:

Վերոհիշյալը արցախցիների հիմնարար իրավունքների պաշտպանության մասին միակ հիշատակումը չէ գերմանալեզու տեղեկատվական տարածքում: Վերադարձի մասին է հիշեցնում Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպությունը մայիսի 20-ին տարածած հաղորդագրությամբ: «Ի հեճուկս ԼՂ խնդրի շուրջ Շվեյցարիայի խաղաղության նախաձեռնության լայն աջակցությանը, Երեւանի եւ Բաքվի կառավարությունները մտադիր են անտեսել այն: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային (CSI) կազմակերպությունը կոչ է անում Շվեյցարիայի դաշնային խորհրդին դիմադրել արտաքին ճնշմանը եւ հետեւողականորեն իրականացնել միջնորդական իր մանդատը», իրազեկում է Քրիստոնեական համերաշխությունը՝ (շվեյցարական) լրատվամիջոցներին տրամադրված հաղորդագրությամբ:

Հիշեցնենք՝ 24.4259 բանաձեւով Շվեյցարիայի խորհրդարանը հանձնարարել է դաշնային խորհրդին Ադրբեջանի եւ ԼՂ-ի հայերի ներկայացուցիչների միջեւ խաղաղության ֆորում կազմակերպել՝ բաց երկխոսությամբ միջազգային հովանու ներքո, տեղահանված հայ բնակչության անվտանգ, համատեղ վերադարձի մասին: Թեեւ մեկ տարի անց ֆորումը չի կայացել, բայց Շվեյցարիայում դրա իրագործմամբ խաղաղության հասնելու նպատակը շարունակում է գերակա մնալ:

⇨5

Համբալները, լրտեսները, դավաճանները եւ ...

⇨1 Այն, որ Կրեմլը փորձում է ազդել Հայաստանի ընտրական գործընթացի վրա, այդ թվում՝ տնտեսական սպառնալիքներով, ԵՄ-ին եւ ԵԱՏՄ-ին միաժամանակ անդամակցելու անթույլատրելիության մասին անհարկի հիշեցումներով, նոր ու անթույլատրելի դրսեւորումներով, սա նույնպես նախընտրական առանձնահատկություն է: Երբ օրումեջ ՌԴ ԱԳ փոխնախարար Գալուզինի մակարդակով ասում են, թե Հայաստանը միաժամանակ չի կարող պարել երկու հարսանիքում/ԵՄ եւ ԵԱՏՄ անդամ լինելը նկատի ունի/, կամ Ռուսաստանի փոխվարչապետ Օվերչուկի մակարդակով խոստանում են մայիսի վերջին Աստանայում ԵԱՏՄ հգագաթնաժողովին քննարկել եւ առանց Հայաստանի մասնակցության Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ որոշում ընդունել, խոսքը Հայաստանի անդամակցության սառեցման մասին է ենթադրաբար՝ այլ բան հնարավոր չէ մտածել: Գումարած, որ ՌԴ-ում օրենսդրորեն թույլատրվել է երկրի ղեկավարին՝ իր երկրի քաղաքացիներին պաշտպանելու համար զինված ուժեր մտցնել այլ երկրի տարածք/բա'/: ՌԴ ԱԽ քարտուղար Սերգեյ Շոյգուն էլ մյուս կողմից է յուղ լցնում կրակին, թե Հայաստանի իշխանության գործելաոճը դաշնակցային չէ:

Չնայած Արարատ Միրզոյանն արդեն մեղմել է, թե բա՝ Հայաստանի իշխանությունը հակված չէ հայ-ռուսական հարաբերություններում լարվածություն մտցնել, հակառակը՝ բնականոն հարաբերությունների է հակված, ԵԱՏՄ-ն լքելու հարց էլ չի կարող քննարկվել, քանի որ Հայաստանն այդպիսի հայտ եւ ցանկություն չի ներկայացրել: Դե բա էլ ինչ մտածես, բացի նրանից, որ հավանաբար ռուսական բարձրաձայնումները նախընտրական օգնություն են ռուսամետ ընդդիմությանը:

Բայց սրանք մեր ընտրությունների աշխարհաքաղաքական համատեքստն են՝մեզանից կախված այնքանով, որքանով խելք կունենանք չներքաշվել սադրանքների մեջ կամ արժանապատվորեն պատասխանել սպառնալիքներին: Ու շատ դեպքերում դրանք ընթացիկ աշխարհաքաղաքական գործընթացների արգասիք են, տեսեք, թե Թրամփն ու Պուտինը ոնց հերթով գնացին «սրբի» դուռը՝ Պեկին, անշուշտ տարբեր տարածաշրջանների, այդ թվում՝ մեր խնդիրների քննարկմամբ, այնպես որ՝ ոչինչ միանշանակ չէ, եւ չարժե ենթարկվել սադրանքների:

Վերջին լրտեսամանիան, երբ արեւմտյան հակումներով The Inside լրատվամիջոցը ՌԴ հատուկ ծառայությունների հետ համագործակցություն է վերագրում Սամվել Կարապետյանին, Գագիկ Ծառուկյանին, իսկ իշխանությունն էլ Անդրանիկ Թեւանյանին ընդհուպ մինչեւ դավաճանության մեջ է մեղադրում՝ մի շարք հարցերի պատասխան է պահանջում: Եթե այդ բոլորը սարքովի չէ, նախընտրական սեւ փիառ չէ, ինչպես ընդդիմությունն է պնդում, ընտրական ընթացքին միջամտելու, ընդհանուր աղմուկը թանձրացնելու փորձ չէ՝ անհայտ/կամ էլ՝ լավ հայտնի/ նպատակներով, ապա տեղի ունեցողը նախ անարդյունավետ պետության վկայությունն է, այն բանի վկայությունը, որ Հայաստանի համապատասխան մարմինները՝ արտաքին հետախուզական ծառայությունը, ԱԱԾ-ը, Անվտանգության խորհուրդը ոչ մի բանի պետք չեն, քանի որ մի լրատվամիջոց այդպիսի տեղեկությունների կարող է տիրապետել, այդպիսի բացահայտումներ անել, իսկ մի ողջ պետության մասնագիտացված ծառայությունները, ի պաշտոնե բացահայտման ու կանխարգելման գործառույթներ իրականացնող կառույցներն անգործունակ են եւ իրենց տեղում չեն:Կամ մի ողջ ԿԸՀ, միլիոնանոց աշխատավարձեր ստացող աշխատակիցներով, չի կարող ստուգել, բացահայտել ու չգրանցել այլ երկրի քաղաքացիություն ունեցողին/խոսքը՝ Նարեկ Կարապետյանի մասին է, որի ՌԴ քաղաքացիություն ունենալն արդեն ինքը եւ ՌԴ ԱԳՆ-ն հերքել են/: Բա լավ, այդպիսի անարդյունավետ կառույցներ, կադրեր ունեցող իշխանությունը ինչ հույսով է ուզում իշխանության մնալ, որ նույն անգործունակ կադրերով շարունակի՞: Իսկ եթե այս ամբողջը թատրոն է ու խաղ՝որոշակի նպատակներով, շատ ավելի վատ...

Իհարկե, ընդդիմությունն իր բացատրությունն ունի այս բոլորին, թե բա՝ սեւ փիառ է, քանի որ ընդդիմադիրների, հատկապես կարապետյանական ընդդիմության վարկանիշն է բարձրացել վերջին շրջանում, Կարապետյանները հերքում են նաեւ Նարեկ Կարապետյանի՝ ՌԴ քաղաքացի լինելը, եւ ՖՍԲ -ի հետ Սամվել Կարապետյանի համագործակցության հնարավորությունը: «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ցուցակի երկրորդ համար Անդրանիկ Թեւանյանի՝ իշխանության որակմամբ երկրին դավաճանելու մեղադրանքով գործ հարուցելու մտադրությանը կոշտ պատասխանել են ինչպես կուսակցության նախընտրական շտաբից, այնպես էլ հենց ինքը՝ Անդրանիկ Թեւանյանը:

Իրավապահների գործունեության արդյունքում միգուցե շուտով իրավիճակ պարզաջրվի, բայց որ այս բոլորը տխուր հետք է թողնում ընտրողի վրա, ստիպում ամեն ինչին նայել նախընտրական շոուների համատեքստում՝դա հաստատ: Մյուս կողմից՝ արտաքին ազդեցություններին Հայաստանի ներկա իշխանության եւ ընդդիմության չափից ավելի ապականոն արձագանքներն ու գործողություններն են մտահոգիչ եւ տեղ են բացում աշխարհաքաղաքական մրցակցության անցանկալի դրսեւորումների համար Հայաստանում: Աստված տա՝ դրանք հունիսի յոթով ավարտվեն ու հետընտրական ցնցումների չբերեն:

Բայց մենք այս անգամ միայն ընտրարշավի հակաէսթետիկային անդրադարձ անենք՝ գոնե մեզնից կախվածի մասով հո կարող ենք ավելի օգտակար լինել հանրությանը: Հիմնական ֆավորիտ ուժերի՝ միմյանց ուղղվող մեղմ ասած կոշտ բնորոշումները ընտրողներիս վերածում են կոպիտ բառապաշարի եւ տգեղ պահվածքի հանդիսատեսի եւ ընդօրինակողի, այդ դեպքում ինչո՞ւ պիտի մենք մեզ իրավունք չվերապահենք այս ընտրական ժամանակի այլանդակ դիմանկարը պատմությանն ի պահ հանձնելու՝ որպես դաս, թե ինչպիսին չպիտի լինի ընտրաշավը:

Ակամա հարցնենք խորհրդարան անցնելու հավակնորդ հիմնական երեք -չորս ուժի ներկայացուցիչներին՝ ի՞նչ բնորոշում չեք տվել իրար այս ընթացքում, ի՞նչ սպառնալիք չեք հնչեցրել միմյանց հասցեին, կամ ո՞ր աստիճանի չեք մերկացրել ձեր դեմքերը, որ ընտրողը չհիասթափվի: Ու ով էլ դառնա իշխանություն՝ փրկություն չկա, նույն վրեժխնդրությամբ շարունակելու եք, դուք բոլորդ թքած ունեք երկրի վրա էլ, նրա մարդկանց վրա էլ, ձերն աթոռ ձեռք բերելը կամ պահպանելն է, «նվազագույն զամբյուղին հավասարված» եւ ամսվա առաջին տասնօրյակում ավարտվող կենսաթոշակը վկա, միմյանց համբալ, ստահակ, դավաճան, լաչառ, փախած անվանելու էնտուզիազմը վկա:

Այնքան եք խոսքի ռուբիկոնն անցել, որ նույնիսկ Ծառուկյանը իր «համապատասխան» հայերենով՝ «դեղորյաքով» ու «շաբաթօյրակով» ավելի էթիկայի մեջ է, քան ձեր առաջընթացիկներն՝ իրենց կզըցնելու, սատկացնելու, եռագլուխ մաֆիայի, համապասխան տեղը մտցնելու, կամ թրքահաճո, պետականաքանդ, ազգակործան պատուհաս, լաչառ, դավաճան փոխորակումներով:

Փոխանցենք ձեր գոհարներից ապագային.

«Փախած լակոտներ, ստահակներ, պատերազմի եռագլուխ կուսակցություն, եռագլուխ մաֆիա, նստելու եք, կզացնելու եմ, սատկացնելու եմ:Սամվել Կարապետյանը որպես փող գողացող պիտի բանտ նստի, Ռոբերտ Քոչարյանը պիտի բանտ նստի՝ կոմեդիա լա ֆինիտա:Ռոբերտին, կալուգացուն եւ Գագոյին երկու բոթասի մակարդակին պիտի հասցնեմ...»/Ն. Փաշինյան/

«Իշխանությունը զավթած խեղկատակ»/Ա. Աշոտյան/, «պետական դավաճան» /Ա. Թեւանյան/, «Չգիտեմ էլ ինչ նենգ միտք կարող է ծագած լինել Նիկոլ Փաշինյանի ուղեղում»/Ն. Կարապետյան/

«Համբալ, դավադիր, կործանարար, աղետաբեր ռեժիմ, Եվրոպայի ունիտազներն ավելի մաքուր են, քան այն, ինչ դուրս է գալիս այս իշխանությունների բերանից: Հիստերիկ, լաչառ, կարծիքը տասը անգամ շաբաթը փոխող, կազինոյի կլիենտ, ստախոս պացիենտի նկատմամբ կարեկցանքով պիտի վերաբերվել:Ով ընտրում է Նիկոլին, ընտրում է Ալիեւին»/Ռ. Քոչարյան/:

Եւ այլն:

Ինչպես ասում են՝ մշտապես հայհոյախոս Վարդան Ղուկասյանը հանգստանում է սրանց համեմատ, որքան էլ զարմանալի, ու անգամ նրա ստեղծած ԴՕԿ-ն է առաջարկում օրենքի դիկտատուրա ու չի մասնակցում համատարած ցեխշպրտոցիին: Միգուցե ճիշտ է անում, ինչպես եւ՝«Բոլորին դեմ եմ»-ը, որը խոսելու փոխարեն առարկայորեն ցույց է տալիս, թե ինչպես են մուկ տշում կամ ջուր ծեծում մյուսները:

Էլ ինչ արմանք-զարմանք բաներ կարող են պատահել մեզ հետ՝ քարոզարշավի ավարտին դեռ երկու շաբաթ կա: Մանավանդ իրար դավաճան ու երկիր հանձնող որակելու նոր թեմա էլ կա շրջանառության մեջ՝Գուգլը փոխել է Տիգրանաշենի անունը Գուգլ-մապ-ում եւ անվանել Քյարքի, ու այն Հայաստանի տարածքում չէ, Էդմոն Մարուքյանն է հայտնաբերել: Հետեւությունները տարողունակ են՝ իշխանությունն անկլավներն է հանձնո՞ւմ...

Յաակկո Հեյկիլյա.
«Հայաստանը մշտապես իմ մտքում է»

ԱՐԵՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-ԿՈՒԿԿՈԼԱ, Ֆինլանդիա *- Յաակկո Հեյկիլյան (ծն. 1956) ֆինն լուսանկարիչ է, հայտնի իր փաստագրական ոճի դիմանկարներով եւ լուսանկարչության մեջ ազգագրական մոտեցմամբ: Քաղաքացիական ճարտարագիտություն է ուսանել Օուլուի համալսարանում, սակայն ուսման ընթացքում սկսել է լուսանկարել եւ թողել է համալսարանը՝ ամբողջությամբ նվիրվելով լուսանկարչությանը: Հեյկիլյան լուսանկարել է էթնիկ խմբերի՝ Հյուսիսային Սկանդինավիայում ապրող մեյնկիելի լեզվի կրողներին եւ Ռուսաստանի ուգրաֆիննական ժողովուրդների (պոմորներին)՝ ուսումնասիրելով արդի պայմաններում ավանդույթների պահպանումը: Նրա պատկերները սովորաբար բեմադրված են, սակայն արմատավորված իրական միջավայրերում՝ համադրելով փաստագրականն ու գեղարվեստական հորինվածքը: Նրա աշխատանքները լայնորեն ցուցադրվել են Եվրոպայում՝ Ֆինլանդիայի, Շվեդիայի, Գերմանիայի եւ այլ երկրների թանգարաններում ու պատկերասրահներում: Հեյկիլյան նաեւ հրատարակել է մի շարք լուսանկարչական գրքեր, որոնք համադրում են տեսողական պատումը եւ մարդաբանական դիտարկումները («Մեր երկիրը՝ Մեանմաա», 1992, «Պոմորներ», 2001, «Կուկկոլանկոսկի», 2005, «Հայկական չպատմված ճակատագրերը» (2008), «Լուռ զրույցներ», 2011, «Խոհանոցային զրույցներ», 2014, «Ջրով թաքնված սենյակներ», 2016, «Հարլեմի անուշ երգը», 2021, «Հարստության փիլիսոփայություն», 2022 եւ այլն):*

-Հարգելի՛ Յաակկո, ձեր ստեղծագործություններում հաճախ եք անդրադառնում ինքնության, տարագրության եւ մշակութային հիշողության թեմաներին, հատկապես՝ փոքրամասնությունների եւ լուսանցքայնացված համայնքների շրջանակներում: Ֆինլանդիայում Հայաստանը համեմատաբար քիչ է հայտնի: Ինչպե՞ս Հայաստանը եւ հայերը հայտնվեցին ձեր ուշադրության կենտրոնում:

-2003 թվականի օգոստոսին ես մասնակցեցի Սանկտ Պետերբուրգի 300-ամյակին նվիրված խմբային ցուցահանդեսին: Հելսինկի վերադառնալիս, գնացքում իմ «Պոմորներ» գիրքը ցույց տվեցի մի մարդու, որը կազմակերպում էր «Եկեղեցին թող հնչի» փառատոնը Հելսինկիում: Նա թերթեց գիրքը, նայեց ինձ, նորից թերթեց: Հետո հարցրեց. «Կցանկանա՞ք գնալ Հայաստան: 2005 թվականի փառատոնը նվիրվում է Հայաստանին»: Ես անվարան պատասխանեցի՝ «Իհա՛րկե այո»: 2004 թվականի ապրիլին մեկ ամիս աշխատեցի Հայաստանում: Այնուհետեւ նախագիծն ինձ տարավ Լոս Անջելես եւ Վենետիկ՝ «Ֆինիշ ֆրեյմ» մշակութային կազմակերպության աջակցությամբ: Իմ առաջին հայկական ցուցահանդեսը ներկայացվեց Վենետիկի բիենալեում 2005 թվականին՝ դարձյալ «Ֆինիշ ֆրեյմի» կազմակերպմամբ:

-Ձեր լուսանկարչական գրքերից է «Հայկական չպատմված ճակատագրերը», որը փաստագրում է հայերին Հայաստանում, Լոս Անջելեսում եւ Վենետիկում: Ի՞նչ ճակատագրեր կամ պատմություններ բացահայտեցիք այդ աշխատանքում:

-Լոս Անջելեսում եւ Վենետիկում ես գրի առա ընտանեկան պատմություններ, որոնք այս կամ այն կերպ կապված էին Օսմանյան կայսրության կազմակերպած ցեղասպանության (1915-1917) հետ: Բոլոր պատմությունները շատ հուզիչ են: Ահա՛ Լոս Անջելեսից



Յաակկո Հեյկիլյա

Վահե Բերբերյանի պատմությունը .

«Հայրս ծնվել է 1914 թվականին՝ հայկական կոտորածներից մեկ տարի առաջ: Եղել է ընդամենը մեկ տարեկան, երբ սկսվել են տեղահանությունները: Նրա ողջ ընտանիքը, ներառյալ հայրը, սպանվել է: Նրանց գյուղից շատ քչերն են փրկվել: Տեղահանությունների ժամանակ տատս վախեցել է, որ հայրս կմահանա սովից: Նա չէր ուզում, որ երեխան տառապի: Երեք անգամ գնացել է գետի մոտ, որ փոքրիկ Ռաֆֆիին ջուրը նետի: Բայց ամեն անգամ հետ է եկել՝ չկարողանալով դա անել: Նա ինձ ասում էր, որ գետն այնքա՜ն լի էր դիակներով, որ երեխային նույնիսկ չէր կարող ընդունել»:

Ահա՛ եւ **Սիրուն Երեցյանի** պատմածը՝ նույնպես Լոս Անջելեսից.

«Հայրս Աստծուն չէր հավատում: Մի անգամ նա ինձ տարավ եկեղեցու կողքին գտնվող հայկական շինությունը: Ներսում գանգերի կույտ կար: Նա ասաց, որ դրանք անապատում սպանված հայերի գանգերն են, որոնք հավաքել ու բերել էին եկեղեցի: Նա լուռ կանգնեց՝ մտածելով, որ գուցե իր եղբայրն այդ կույտում է: Այնտեղ կային մեծահասակների գանգեր եւ երեխաների փոքր գանգեր: Բոլորը ժպտում էին. ինձ թվում էր, որ հայկական գանգերը ժպտում են...»:

-Եվրոպական քաղաքներից Վենետիկն ամենաշատ հայկական հետքեր ունեցողն է: Բացի Սուրբ Ղազար կղզուց, ի՞նչ այլ հայկական վայրեր կամ թեմաներ եք լուսանկարել այնտեղ:

-Հայկական վարժարանը, որը գտնվում է Կամպո Սանտա Մարգարիտայի մոտ... Ես երբեք չեմ մոռանա Սուրբ Ղազար կղզուց **Հայր Ուլուհոճյանի** խոսքերը. «Երբ եվրոպացիները դեռ թափառում էին անտառներում, մենք արդեն պալատներում էինք»: Նրանից բացի՝ լուսանկարել եւ նկարահանել եմ նաեւ Կարո Դեմիրճյանի, Լիդոյում բնակվող Հակոբի եւ Արտո Քեուչեյանի պատմությունները: Կարոն մնացել է իմ հիշողության մեջ որպես մեղմ, ջերմ, մի փոքր մելամաղձոտ անձնավորություն: Նա պատմում էր. «Մեր ամբողջ ընտանիքը սպանվել է 1915-ին՝ հորիցս բացի: Նա երեք տարի մնացել է քուրդ ընտանիքում, հետո նրա զարմիկը նրան տարել է Հալեպ: Այնտեղից գնացել է Բեյրութ, 1920-ին հայտնվել Մարսելում, 1923-ին եկել է Սուրբ Ղազար, 1930-ին ամուսնացել է Լիոնում, 1950-ին ինձ ուղարկել է Սուրբ Ղազար...»:

-Որեւէ հետաքրքրական կամ հումորային դրվագ կպատմե՞ք ձեր հայաստանյան փորձառությունից:

-Ահա՛ մի փոքր պատմություն: Ես օրերս սկսում էի՝ գյուղում պարզապես շրջելով՝ մարդկանց հետ ծանոթանալու համար: Գյուղի անունը Նազրվան էր (այժմ՝ Ղազարավան): Վաղ առավոտ էր: Հանկարծ ձախ ուսիս զգացի մի մեղմ հպում, ինչպես արեւոտ առավոտի ողջույնը: Մի մարդ ինձ ասաց՝ ե՛կ այս կողմ: Մենք քայլեցինք նեղ արահետով՝ գոմաղբի կույտի կողքով, անցանք գլուխները խոնարհած խոճկորների մոտով: Նախ նա բարձրացրեց դռան առջեւ կախված լաթը, ապա բացեց կապտավուն դուռը:

Մենք մտանք մի խրճիթ՝ մի տեսակ սրբավայր, որի հատակի քարե սալերը ճաքած էին: Նստեցինք՝ խմելու թունդ հայկական սուրճ՝ առանց խոսքի, առանց ընդհանուր լեզվի: Հանկարծ լռության մեջ մարդը մոտեցավ պատի պահարանին, վերցրեց տան միակ գիրքը՝ Աստվածաշունչը, որի կազմն ու փխրուն էջերը մասամբ այրված էին: Նա ձեռքով շոյեց այրված էջերը:

«Օսմանյան, Օսմանյան կայսրություն»,- ասաց նա եւ Աստվածաշունչը դրեց գորգի վրա:

Սա ավելի շատ կարճ պատմվածք է, քան միջադեպ, բայց ինձ համար շատ տպավորիչ եւ հուզիչ հանդիպում էր:

-Կարո՞ղ ենք ասել, որ, ֆինն վանական Սերաֆիմ Սեպյաալայի՝ Հայաստան կազմակերպվող ուղեւորությունների եւ նրա հրատարակությունների հետ մեկտեղ, ձեր լուսանկարներն էլ նպաստել են Ֆինլանդիայում Հայաստանի ճանաչելիության աճին:

-Հուսով եմ, որ Սերաֆիմի կողքին ես նույնպես որոշ չափով նպաստել եմ դրա աճին: Համավարակից առաջ՝ 2016-2019 թվականներին, Մարիաննե Թիլմանի ղեկավարած «Արմենիատուրս» կազմակերպության հետ համատեղ Հայաստանում կազմակերպել եմ վեց աշխատարան ֆինն լուսանկարիչների համար: Յուրաքանչյուր աշխատարան ունեցել է տասը մասնակից: Մենք եղել ենք Ղազարավանում, Էջմիածնում եւ Դիլիջանում: Իհարկե, ցուցահանդեսները եւս մեծացնում են ճանաչելիությունը: Վենետիկի բիենալեում 2005 թվականի առաջին ցուցադրությունից հետո «Հայկական չպատմված ճակատագրերը» ցուցադրվել է Ֆինլանդիայի երկու թանգարանում եւ մեկ ցուցասրահում, ապա նաեւ բազմաթիվ այլ ցուցահանդեսներում:

-Անցած մարտի 8-ին ձեր գործերի ցուցահանդեսը բացվեց նաեւ Տորնիոյի «Ահնե» արվեստի թանգարանում եւ գործելու է մինչեւ օգոստոս՝ ներկայացնելով նաեւ հայկական աշխատանքները: Կա՞ն արդյոք Հայաստանի հետ կապված ընթացիկ կամ ապագա նախագծեր:

-Այս պահին որոշակի ծրագրեր չունեմ Հայաստանի հետ կապված: Բայց Հայաստանը մշտապես իմ մտքում է: Կարո՞ղ եք ինձ առաջարկել Հայաստանի հետ կապված հետաքրքրական գաղափարներ: 2005 թվականի Վենետիկի բիենալեի ցուցադրության մեծ մասը պահվում է իմ պահեստում: Շատ կուզենայի այն նվիրաբերել Երեւանի ժամանակակից արվեստի թանգարանին...

Իսրայելական կայֆն ընդդեմ հակահայ արարքների

«**Դավար** (Իսրայելի երկրի աշխատավորների խոսքը)» առցանց թերթում մայիսի 18-ին լույս է տեսել **Յարոն Վեյսի** «Երուսաղեմի օրը ես դարձյալ կանգնում եմ հայկական վանքում՝ սպասելով թքոցների. որտե՞ղ է ոստիկանությունը» հոդվածը: Հեղինակը քննադատում է Երուսաղեմի օրվա դրոշների ավանդական երթը, որը, ըստ նրա, այլեւս քաղաքի միասնության խորհրդանիշ չէ, այլ դարձել է լարվածության ու բաժանման աղբյուր: Նա նշում է, որ այդ օրը Հին քաղաքի մուսուլմանական եւ քրիստոնեական թաղամասերում բազմաթիվ խանութներ փակվում են՝ սպասվող բախումների ու ոտնձգությունների պատճառով: Վեյսը պատմում է, որ ամեն տարի կամավորների հետ կանգնում է Հայոց պատրիարքարանի փողոցում՝ հայկական վանքի մուտքի մոտ, որպեսզի պաշտպանական ներկայություն ապահովի: Ըստ «Կրոնի ազատության տվյալների կենտրոնի» հաշվետվությունների, Հին քաղաքում քրիստոնյաների նկատմամբ արձանագրված ոտնձգությունների մոտ երկու երրորդը տեղի է ունենում հենց այդ փողոցում: Չնայած այս փաստերին, ոստիկանությունը բավարար ուժեր չի տեղակայում հայկական վանքի դիմաց՝ երթի ընթացքում կանխելու միջադեպերը:

Հեղինակը նկարագրում է, թե ինչպես կամավորները տեսախցիկներով արձանագրում են թքելու դեպքերը եւ նյութերը փոխանցում ոստիկանությանը, թեեւ կասկածում է, որ շատ գործեր փակվում են առանց արդյունքի: Նրա կարծիքով, եթե տեղում ոստիկաններ լինեին, հնարավոր կլիներ անմիջապես ձերբակալել իրավախախտներին: Հոդվածը շեշտում է, որ քրիստոնյաների նկատմամբ նման վերաբերմունքը ոչ միայն իրավական, այլեւ խոր բարոյական ճգնաժամ է եւ վնասում է Իսրայելի միջազգային հեղինակությանը: Հեղինակը նաեւ զգուշացնում է, որ նման երեւույթներն աշխարհում նպաստում են հակահրեական տրամադրությունների եւ թուլացնում հրեաների բարոյական դիրքերը:

Վերջում նա առաջարկում է փոխել դրոշների երթի երթուղին, որպեսզի այն չանցնի մուսուլմանական, հայկական եւ այլ քրիստոնեական թաղամասերով, իսկ եթե երթուղին մնա նույնը, ապա ապահովել ուժեղ ոստիկանական ներկայություն:

Յարոն Վեյսն այն քչաթիվ իսրայելցիներից է, որ հետեւողականորեն պաշտպանում է հայերի դատը՝ Հայաստանում թե Իսրայելում: Տարիներ շարունակ նա իսրայելական խմբեր է բերել Հայաստան եւ Արցախ, կազմակերպել հայանպաստ միջոցառումներ, գրել հոդվածներ: Նրա հետ մեր հարցազրույցը («Եկե՛ք Արցախ» վերնագրով) տե՛ս «**Ազգ**»ի 2022 թ. մայիսի 6-ի համարում:

Ա. Բ.

Լիաննա Հարությունյանի հաջողությունները Բարսելոնայում

Միջազգային օպերայի հայ աստղ Լիանա Հարությունյանն ապրիլի վերջին երկու անգամ «Տուրանդոտ» օպերայի գլխավոր դերերգով հանդես եկավ Բարսելոնայի Կատալոնական երաժշտության պալատի բեմում:

Ստորեւ ներկայացնում ենք կատալոնացի քննադատների կարծիքները հայ երգչուհու դերերգի մասին:

«Այս «Տուրանդոտի» հաջողությունը կազմի բոլոր անդամների ձեռքբերումն էր: Սակայն առաջինը, ում պետք է ծափահարել, սոպրանո Լիաննա Հարությունյանն է, որն այստեղ իր նորամուտն էր նշում գլխավոր դերում: Դժվար թե հնարավոր լինի պատկերացնել ավելի կատարյալ կատարում, քան նրա առաջին Տուրանդոտն էր: Այն բոլոր առումներով փայլուն էր: Նա բացառիկ արտահայտչականությամբ ու խորությամբ ներկայացնում էր մի դեր, որը հաճախ հնչեցնում են կոշտ, գրեթե ճչացող, լարված ու խոցող հնչերանգներով: Բայց Հարությունյանի կատարման մեջ այդ ամենից ոչինչ չկար: Ընդհակառակը, նրա մեկնաբանությունը լի էր նրբությամբ ու խոր զգացմունքայնությամբ: Հատկապես այն տեսարանում, երբ Տուրանդոտը հրաժարվում է իր սիրտը հանձնել Կալաֆին՝ այն բանից հետո, երբ վերջինս լուծում է նրա հանելուկները: «Ո՛չ, ո՛չ, ես քոնը չեմ լինելու: Չե՛մ ուզում, չե՛մ ուզում». այս խոսքերն ունկնդրի սրտին դիպան անմիջական ու կործանիչ հուզական ուժով՝ թողնելով խոր, ցավոտ մի հետք» (**Ալեխանդրո Մարտինես**, «Պլատեռ մագազին»):

«Կատարողների կազմում առանձնահատուկ կերպով աչքի ընկավ հայ դրամատիկ սոպրանո Լիաննա Հարությունյանը՝ Տուրանդոտի դերում: Նրա ձայնային գործիքը հզոր է, թարմ, հարուստ հարմոնիկ երանգներով եւ անթերի վերահսկվող ամբողջ ձայնային տիրույթում: Նրա ուժեղ հնչողությամբ բարձր նոտաները բացառիկ վարպետությամբ

հաղթահարում են նվագախմբի եւ երգչախմբի հնչյունային խտությունը՝ փայլուն կերպով տիրապետելով օպերային երգացանկի ամենաբարդ դերերից մեկին» (**Ֆեռնանդո Սանս Ռիվիեր, «Օպերա ակտուալ»**):

«Հարյուրամյակի առիթով վերակենդանանում է մի մեծ «Տուրանդոտ»: Սոպրանո Լիաննա Հարությունյանը մարմնավորեց գրեթե կատարյալ Տուրանդոտ՝ հզոր, ազդեցիկ, անթերի հաստատված բարձր նոտաներով՝ նույնիսկ ամենաբարդ ու պահանջկոտ հատվածներում, եւ միաժամանակ՝ նուրբ զգացողությամբ ձայնային գիծը մեղմացնելու ու ձեւավորելու մեջ: Նրա գեղեցիկ, հարուստ հարմոնիաներով լեցուն ձայնը վստահորեն վեր էր բարձրանում նվագախմբի եւ երգչախմբի հնչյունային զանգվածից՝ իրեն պարտադրելով ուժի ու նրբագեղության բացառիկ համադրությամբ» (**Պաբլո Մելենդես-Հադդա, «էլ պերիոդիկոդե Կատալունյա»**):

«Այս Տուրանդոտում հատկապես առանձնանում է Լիաննա Հարությունյանի հղկված ու մշակված ձայնարտադրությունը՝ ստեղծելով խորապես հուզական Սառցե Արքայադստեր կերպար: ....Կատարողների կազմում հատկապես աչքի ընկավ հայ սոպրանո Լիաննա Հարությունյանը, որի ձայնարտադրության նրբությունն ու մաքրությունը կարողացան Սառցե Արքայադստերը բերել մարդկային զգացմունքայնության դաշտ: Նրա ձայնի ուժը, ձայնավարման վերահսկողությունը եւ ամբողջ տեսիտուրայի կայունությունն ընծայեցին մի Տուրանդոտ, որն առանձնանում էր տեմբրային բացառիկ գեղեցկությամբ եւ մարգարտաշող, նրբահյուս ֆրազավորմամբ» (**Խորդի Մադալենո, «Լա վանգուարդիա»**):

«Հայ սոպրանո Լիաննա Հարությունյանի հզոր ձայնը խոր ազդեցություն թողեց հանդիսատեսի վրա՝ ամբողջ ներկայացման ընթացքում՝ բացահայտելով չափված, ճշգրտորեն կշռադատված մեկնաբանություն՝ ամուր տեխնիկական վստահությամբ: Նրա վերեւի նոտաները հզոր էին եւ նպատակային՝ թատերական արտահայտչության մեջ ճշգրիտ, կարողանալով փոխանցել Սառցե Արքայադստեր զայրույթը Կալաֆի ցանկությունների հանդեպ: Միեւնույն ժամանակ, երբ նա մեղմացնում էր իր գեղեցիկ ու միատարր ձայնը, ի հայտ էին գալիս նրա ճկունությունն ու քնարականությունը: Ստորին ռեգիստրի լիարժեք հնչողությամբ, ինչպես նաեւ բարձր նոտաների ձայնարտադրության ու պրոյեկցիայի լիակատար վերահսկմամբ, նա ստեղծեց մի մեծ Տուրանդոտ, որն արժանացավ հանդիսատեսի ոգեւորված օվացիաներին եւ հոտնկայս ծափահարություններին» (**Խավիեր Պերես Սենս, «Սկերցո»**):

Ամեն ինչ կորցրած արցախցիները հույսը դեռ պահպանում են, վերադարձի՛ հույսը

⇨3 «**Ազգի**» նախորդ համարներում մանրամասն լուսաբանել ենք): Մայիսի 20-ի հաղորդագրության մեջ CSI-ը նշում է՝ «ՀՀ վարչապետը միացել է Ադրբեջանի դիրքորոշմանը՝ Շվեյցարիայի ԱԳ դաշնային դեպարտամենտին տեղեկացնելով, որ խաղաղության նման ֆորումը «ցանկալի չէ»: ՀՀ խորհրդարանական ընտրությունների նախաշեմին վարչապետի այս դիրքորոշումը խոր խզում է գոյացնում կառավարության եւ ընդդիմության միջեւ, քանի որ շվեյցարական նախաձեռնությունը վայելում է Հայաստանի բնակիչների լայն աջակցությունը»:

Մամլո հաղորդագրության մեջ ներկայացվում է, որ հունիսի 7-ին ընտրություններին մասնակից 8 կուսակցություն եւ խումբ կողմ են Շվեյցարական նախաձեռնությանը, բացի կառավարող՝ ՔՊ-ից: «ՀՀ վարչապետի դիրքորոշումը դժվարին վիճակի մեջ է դնում իշխող Քաղպայմանագիր կուսակցությանը, որ Շվեյցարական նախաձեռնությունը մերժելու պատճառով հակասության մեջ է մյուս քաղաքական ուժերի հետ»: Շվեյցարիայի խաղաղության նախաձեռնությանն աջակցում են «Հայաստան» դաշինքը (նեռայալ՝ ՀՅԴ), «Ապրելու երկիր» կուսակցությունը, «Հայաքվե» -ն (սատարում է «Ուժեղ Հայաստան» կուսակցությանը), «Մայր հայրենիք» կուսակցությունը («Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ դաշինքով է մասնակցում), Ազգային ժողովրդավարական դաշինքը, Հայաստանի հանրապետական, «Ուժեղ Հայաստան», «Միասնության թեւեր» կուսակցությունները: Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպության ձեւակերպմամբ՝ դաշնային խորհուրդը չպետք է տեղի տա, զիջի: Կազմակերպության ներկայացուցիչ Ջոյել Վելդքամփը խորապես մտահոգիչ է համարում, «որ ՀՀ-ում իշխող կուսակցությունը ընտրությունների նախաշեմին կոչ է անում դաշնային խորհրդին անտեսել էթնիկ զտման պատճառով տեղահանության զոհ դարձածներին: Շվեյցարիայի օրենսդիրի երկու պալատների ընդունած 24.4259 բանաձեւը բարոյական հստակ քայլ է: Արտերկրի կառավարության՝ հատկապես նրա, որ չի ներկայացնում տեղահանվածների շահերը, որեւէ առարկություն չի ազատում դաշնային խորհրդին իրականացնելու իր պարտականությունը»:

Շվեյցարիայի խաղաղության նախաձեռնությանը բուռն աջակցում է Արցախի հայերի վտարանդի ղեկավարությունը, որ ապրիլի վերջին Բեռնում էր (տե՛ս «**Ազգ**» 8.05. 2026, 15.05.2026): Դեռեւս փետրվարին ԼՂ նախագահ, Աժ խոսնակ **Աշոտ Դանիելյանը** բաց նամակ էր հղել ԱԳ նախարար **Իգնացիո Կասիսին**: «ԼՂ-ից բռնի տեղահանված 150 000 անձ ո՛չ իշխանության աշխարհաքաղաքական փոփոխություն, ո՛չ էլ ՀՀ-ի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացը խաթարել է ցանկանում: Վստահ ենք, որ Շվեյցարիայի առաջարկը կիրականացվի: Այն ճանապարհ է հարթում տեղահանվածների համար իրացնելու իրենց հիմնարար իրավունքը՝ անվտանգ եւ արժանապատիվ վերադարձը հայրենիք»:

«Խաղաղության ֆորումն ավելի քան հրատապ է, մանավանդ Ադրբեջանի պահանջով ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարումից հետո, նկատել է տալիս Քրիստոնեական համերաշխություն կազմակերպության մամլո հաղորդագրությունը՝ մանրամասնելով. Այդ ժամանակվանից ի վեր գոյություն ունի դիվանագիտական վտանգավոր վակուում մարդասիրական հիմնարար մտահոգությունները լուծելու վերաբերյալ: Դրանք ներառում են կրոնական վտանգված ժառանգության պաշտպանությունը, գերեզմանատների հասանելիությունը, հարազատների արտաշիրմումը՝ Հայաստանում վերաթաղման համար: Շվեյցարական խաղաղության նախաձեռնությունն այժմ ունի եզակի հնարավորություն լրացնելու այդ դատարկությունը եւ չեզոք հող ապահովելու մարդկության առջեւ ծառացած այս հրատապ խնդիրների համար: Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպությունը կոչ է անում Շվեյցարիայի դաշնային խորհրդին չհետաձգել խաղաղության ֆորումը:

Իմաստաբանական բառարան

Ներմուծված երեւույթներ

Հայերենի մեջ հանգամանքների բերումով տեղ գտած օտարահունչ «դավաճան» բառը բնիկ հայկական չէ եւ չէր էլ կարող լինել: Քանի որ դավաճանը այն անձն է, որը դրսից է գալիս, ձեւանում է որպես յուրային եւ սկսում իր քայքայիչ գործունեությունը:

Հր. Աճառյանի կարծիքով, «դավաճան» բառի հիմքում եղած ԴԱՒ արմատի ծագումն անորոշ է: Սակայն **Գեւորգ Ջահուկյանը**, առանց օրինակներ բերելու, պնդում է, որ բառը իրանական ծագում ունի, եւ դրա հետքերը պետք է տեսանելի լինեն իրանական որոշ լեզուներում:

Ես նույնպես պրպտեցի եւ Աֆղանստանի դարի լեզվում, որը ֆարսիի ու տաջիկերենի հարազատ եղբայրն է, գտա *dav zadan* («դավ խփել») արտահայտությունը, որը նշանակում է հայհոյել, անպատվել, ծաղրանքի ենթարկել:

Կարելի է ենթադրել, որ բառը՝ իր կոչմանը համապատասխանող անձի միջոցով, հենց Աֆղանստանից կամ էլ որեւէ երրորդ երկրից անխոչընդոտ ներմուծվել է Հայաստան:

Հրաչյա Աճառյանն այս կարգի փոխառությունները բնորոշում է «բառը նյութի հետ լեզվի մեջ մուտք գործել» արտահայտությամբ:

Նման փոխառությունների շարքին կարելի է դասել նաեւ «պոռնիկ» բառը, որը փոխառություն է հունարենից: Սա նշանակում է, որ բառը ժամանակին Հայաստան է մուտք գործել հենց Հունաստանից՝ պոռնիկին բնորոշ վարքագիծ ունեցող անձնավորության միջոցով:

«Կավատ» բառը եւս նույն տրամաբանությամբ արաբական աշխարհից է ներմուծվել Հայաստան՝ իր մասնագիտությունը յուրացրած որեւէ անձի միջոցով:

Թեթեւաբարո կանանց բնորոշելու համար հայերենում կա եռահնչյուն մի բառ, որն իբր «Բարոյական Օրենքներից Զուրկ» բառակապակցության հապավումն է (անշուշտ՝ դա կեղծ ստուգաբանություն է): Այդ եռահնչյուն բառը, որը կովկասյան լեզուներից մեկում «աղջիկ» է նշանակում, Հայաստան է բերվել Կովկասից՝ այդ մասնագիտությանը մոտ կանգնած գեղուհիներից մեկի միջոցով:

Եզրահանգումն այն է, որ մենք Հայաստանում չունենք բնիկ ու զտարյուն դավաճաններ, պոռնիկներ, կավատներ ու բարոյական նորմերը ոտնահարած գեղուհիներ: Նրանք բոլորն էլ ներմուծված են:

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Անհայտ փաստեր. Հայաստանում տնտեսագիտական ուսումնական առաջին հաստատությունը հիմնվել է 102 տարի առաջ

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Մեզանում ոչ ոք, համոզված եմ, տեղյակ չէ, թե որտեղից են սերում ներկայիս տնտեսագիտական ուսումնական հաստատությունները եւ ե՛րբ է ստեղծվել այն կառույցը, որը, հիրավի, կարելի է համարել այս ոլորտի հայաստանյան մասնագիտական հետագա զարգացման «հիմնաքարը»: Իսկ այդ հաստատությունը 1924 թվականին Երեւանում հիմնված առաջին հաշվապահական կուրսերն էին: Այս տեղեկությունը ես քաղել եմ հավաստի աղբյուրից՝ իմ պապի՝ **Գեղամ Եգորի Սարգսյանի** ձեռագիր հուշագրությունից, որից որոշ ուշագրավ էջեր արդեն իսկ հրապարակել եմ, եւ դեռ բազում հետաքրքրական եւ ուսանելի դրվագներ կան, որ արժանի են հանրության ուշադրությանը ներկայացնելու:

Գեղամ Ե. Սարգսյանը 20-րդ դարասկզբին ավարտել է Երեւանի թեմական դպրոցը, Վեհափառ Հայրապետի՝ Գեւորգ V-ի օրհնությամբ ու հավանությամբ ընդունվել էջմիածնի Գեւորգյան ճեմարան, 1916 թ.-ին, կիսատ թողնելով ճեմարանական կրթությունը, թեմական առաջնորդ Խորեն Մուրադբեկյան սրբազանի (հետագայում՝ կաթողիկոս) կարգադրությամբ հանձն է առել Սարդարապատի շրջանի Մոլլաբայազետ (ներկայումս՝ Բամբակաշատ) գյուղի դպրոցի ավագ ուսուցչի պաշտոնը: 1918-ին երկաթգծի պաշտպան բատալյոնի կազմում մասնակցել Սարդարապատի պաշտպանական կռիվներին: 1920 թ.-ի ամռանը մասնակցել է Հայաստանի ազգային կառավարության նախաձեռնած՝ դեպի Իգդիր գավառ հարձակմանը: Նույն տարում Երեւանի Գավլուսբաժնի կողմից նշանակվել է Պուշկինյան դպրոցի դասատու, ապա նույն տարում հաստատվել Արզականի դպրոցի վարիչի պաշտոնում: Ախտայի շրջանի գյուղերում նրա ծավալած լուսավորչական աշխատանքի եւ անմիջական ջանքերի շնորհիվ 1924-25-26 ուս. տարիներին դպրոցական մի քանի շենքեր են կառուցվել եւ վերակառուցվել: 1925-ին շրջկենտրոն Ախտայում հիմնադրել է Գյուղերիտ յոթնամյա դպրոցը, դարձել վերջինիս վարիչը, միաժամանակ աշխատել՝ որպես շրջանի լուսհրահանգիչ:

Գեղամ Եգորի Սարգսյան

Ստանալով բազմակողմանի հիմնավոր կրթություն՝ այդ տարիներին դասավանդել է համարյա բոլոր առարկաները՝ հայոց լեզու, հայ գրականություն, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, երաժշտություն եւ այլն: Նրա անմիջական միջնորդությամբ 1924 թ.-ին հիմնվել են Հայաստանում առաջին հաշվապահական դասընթացները. երկրի ժողտնտեսության զարգացման գործում դրանք բացելու անհրաժեշտությունը նա ներկայացրել է Լուսժողկոմատ, այստեղից էլ՝ Մռավյանին:

1937 թ.-ին կեղծ մատնագրի հիման վրա կալանավորվել է եւ առանց հիմնական մեղադրանքի աքսորվել Մագադանի աքսորականների ճամբարներ: Աքսորում անցկացրել է տաժանակրության 7 երկար ու ծիգ տարիներ՝ հայտնվելով մահվան ճամբարներում: 1952 թ.-ին Գ. Սարգսյանի վերաբերյալ պաշտոնապես որոշում է կայացվել, որ նրա դատվածությունն ապօրինի է եղել, ներկայացված մեղադրանքը չեղյալ է համարվել, եւ նա լիովին արդարացվել է: Մահացել է 1987 թվականին՝ 92 տարեկան հասակում՝ մինչեւ վերջ պահպանելով պայծառ միտքը:

Ահա Գեղամ Ե. Սարգսյանի հուշագրությունից քաղված դրվագը, որում պատմվում է Հայաստանում առաջին հաշվապահական դասընթացներ կազմակերպելու մասին:

«...Հաշվապահություն սովորել էի Երեւանում իմ միջնորդությամբ բացված **Մարտին Կիրակոսյանի** հաշվապահական կուրսերում: Մարտին Կիրակոսյանն Ախտայի շրջանում իմ աշխատելու ժամանակ Ծաղկածորի դպրոցի վարիչն էր: 1924 թ. գարնանն այցելելով Ծաղկածորի դպրոց՝ գիշերեցի Կիրակոսյանի տանը: Նա ինձ պատմեց, որ ինքն ունի բարձրագույն ֆինանսական կրթություն: Ղարսում վքարի ենթարկվելու (գնացքի տակ ընկնելու) պատճառով հաշմանդամ դառնալով՝ համաձայնվել է աշխատել Ծաղկածորում՝ որպես ուսուցիչ, միաժամանակ Երեւանում հաշվապահական կուրսեր բացելու ծրագիր է կազմել: Շատ քչերին էր հաջողվում գնալու Թբիլիսի՝ հաշվապահական կուրսերում սովորելու: Անհրաժեշտ էր Երեւանում եւս նման կուրսեր բացել: Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման եւ աճի հետ միաժամանակ աճում էր հաշվապահական կադրեր ունենալու անհրաժեշտությունը: Ծանոթանալով Կիրակոսյանի կազմած ծրագրին՝ խնդրեցի այն վստահել ինձ: Ծրագրի նյութերը վերցնելով՝ մի քանի օրից մեկնեցի Երեւան, ներկայացա Լուսժողկոմատ եւ այնտեղ **Տիգրան Մուշեղյանին** ներկայացրի Կիրակոսյանի կազմած ծրագիրը *(Տիգրան Պետրոսի Մուշեղյանը եղել է լուսավորության բնագավառի գործիչ, ֆիզիոլոգ, ավարտել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանության բաժինը, 1912 թ.-ից աշխատել նույն ֆակուլտետի ֆիզիոլոգիայի ամբիոնում, 1919-ից եղել է Երեւանի արական գիմնազիայի ուսմասվար: 1921-ից դասավանդել ԵՊՀ-ում, իր ջանքերով է մայր բուհում կազմավորվել կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնը: 1933-ից մինչեւ կյանքի վերջ՝ 1935 թ., եղել է ԵՊՀ ռեկտորը: Մեծ է եղել նրա դերը դասագրքեր ստեղծելու, մանկավարժական կադրեր պատրաստելու գործում: Հ. Ս.)*: Տ. Մուշեղյանը ծանոթանալով ծրագրին՝ հաջորդ իսկ օրն այն ներկայացրեց ընկ. **Մռավյանին** *(Ասքանազ Մռավյանը եղել է կուսակցական եւ պետական գործիչ, 1921-1923 թ.թ. ՀՍԽՀ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար, 1923-1929 թվականներին՝ լուսավորության ժողկոմ: Հ. Ս.)*: Մռավյանը հավանելով մտահղացումը՝ կարգադրում է Կիրակոսյանին հետ կանչել քաղաք եւ օգնել նրան հաշվապահական վեցամսյա կուրսեր հիմնելու՝ Լուսժողկոմատի հսկողությամբ: Մյուս օրը Մուշեղյանն ինձ հանձնեց ծրագիրը եւ Մռավյանի գրավոր կարգադրությունը՝ Մարտին Կիրակոսյանին Ծաղկածորից Երեւան ուղարկելու եւ Լուսժողկոմատի տրամադրության տակ աշխատելու կապակցությամբ: Այսպես Հայաստանում հիմնվեցին առաջին հաշվապահական կուրսերը, որոնք ղեկավարում էր Կիրակոսյանը: Հենց նրա խորհրդով ես սովորեցի այդ կուրսերում՝ միաժամանակ աշխատելով մեծահասակների դպրոցում:

Տիգրան Պետրոսի Մուշեղյան

1930 թ.-ից մինչեւ 1937 թ. հունվարի 10-ը աշխատեցի՝ որպես հաշվապահ: Մինչեւ կեղծ մեղադրանքով կալանվելս՝ 1936 թ. սեպտեմբերի 1-ից նշանակվեցի Ապարանի տասնամյա դպրոցում՝ քարտուղար-հաշվապահի պաշտոնով եւ միաժամանակ որպես աշխարհագրության դասատու»:

Կաթոլիկական ՁԼՄ-ներում ընդգծվում է Արամ Ա-ի՝ Վատիկանի 3-րդ համաժողով...

⇨1 Cilicia TV-ի տեղեկատվությունն առ այն, որ Արամ Ա-ն խոսել է Արցախի հայերի վերադարձի իրավունքի, մշակութային ժառանգության, Բաքվից հայ գերիների ազատման մասին, նշյալ ՁԼՄ-ներում չգտանք: «Երկու եկեղեցիների միջեւ հաղորդակցությունն ամրապնդելու նպատակով Հռոմի պապը հայ սուրբ Ներսես Շնորհալուն ավելացրել է Հռոմեական մարտիրոսաբանությանը: Սա նշանակում է, որ սրբի պատարագային պաշտամունքն այժմ թույլատրելի է նաեւ կաթոլիկ եկեղեցում»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Տաք գույներով ու բանաստեղծական ներշնչանքով

Գեղանկարչի «Անվերջ վերադարձը» հայրենի Գյումրի

Մայիսի 16-ին **Սամվել Սեւադայի** գեղանկարչական գործերի **«Անվերջ վերադարձ»** խորագրով անհատական հետահայաց ցուցահանդեսը բացվեց Գյումրիում՝ «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի ցուցասրահում: Ներկայացված են արվեստագետի տարբեր տարիների ստեղծած ութ տասնյակից ավելի մեծակտավ աշխատանքներ:

Քաղաքիս ծնունդ արվեստագետները որտեղ էլ որ ապրելիս լինեն, պարբերաբար գալիս են հարազատ օրրան՝ իրենց հոգու պարտքը տալու ու նաեւ հոգեւոր նոր լիցք ստանալու: Այս իմաստն ունի նաեւ Սեւադայի ներկա ցուցահանդեսի խորագիրը: Գեղանկարիչ, լուսանկարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամվել Սեւադան նաեւ բանաստեղծական ժողովածուների հեղինակ է, ու նրա շատ գեղանկարներ իր բանաստեղծությունների տողերով են կոչվում եւ դրանց տրամադրության արտահայտություններ են: Հիմնական թեմաներն են, ինչպես ինքը նշեց, մարդն իր զգացմունքներով, հայրենի բնությունը, քաղաքային տեսարանները, իր սիրած գրական հերոսները, ուրույն տեղ ունեն հոգեբանական խորք ու խոհով կանացի կերպարները:

Ցուցահանդեսի բազմամարդ բացման ժամանակ, որին նկարչի բարեկամ եւ արվեստասեր համաքաղաքացիներից բացի ներկա էին նաեւ հյուրեր մայրաքաղաքից, հանրապետության տարբեր վայրերից, արտերկրից, նկարչուհի, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Սուսաննա Մկրտչյանը** Սամվել Սեւադայի ամեն աշխատանքը սիրո մի դրվագ որակեց: Իսկ Գյումրու քաղաքապետարանի մշակույթի եւ երիտասարդության հարցերի բաժնի պետ **Լիլիթ Թովմասյանը** մասնավորապես նշեց, թե գյումրեցիների եւ այս քաղաքը հավանողների համար սա սիրված միջավայր կլինի, որովհետեւ ամեն մեկը կարող է երկխոսել այս կտավների հետ, գտնել իր թաղը, գտնել իր հիշողությունը, իր մանկությունը:

Գեղանկարչական այս ուշագրավ ցուցահանդեսն այցելու արվեստասերների առջեւ բաց կլինի ամբողջ մեկ ամիս՝ մինչեւ հունիսի 16-ը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

EUROPEAN SOLIDARITY CORPS | SALTO EASTERN EUROPE & CAUCASUS

Նրանք եկել էին HUJ կամավորության, բայց գտան ավելին՝ ընկերություն, ընտանիք ու Հայաստան

Կամավորությունը երբեմն սկսվում է պարզապես մեկ որոշումից՝ մեկնել անծանոթ երկիր, օգնել մարդկանց, օգտակար լինել: Բայց շատ արագ այն վերածվում է մի ճանապարհի, որտեղ մարդը բացահայտում է ոչ միայն նոր մշակույթ ու նոր իրականություն, այլեւ ինքն իրեն: Այսօր, երբ երիտասարդները ավելի ու ավելի հաճախ փորձում են կյանքում գտնել ոչ միայն աշխատանք, այլ նաեւ իմաստ ու ներգրավվածություն, կամավորությունն արդեն վաղուց դուրս է եկել «բարի գործի» սահմանումից՝ դառնալով հասունանալու, աշխարհայացք փոխելու եւ մարդկանց միջեւ իրական կապեր կառուցելու յուրահատուկ փորձառություն:

Հայաստանում այդ ճանապարհը առավել կազմակերպված ու միջազգային բնույթ է ստացել նաեւ Ուսանողական ջոկատների հանրապետական շտաբի՝ HUJ-ի գործունեության շնորհիվ: SALTO EECA հավատարմագրումից հետո կազմակերպությունը սկսել է ընդունել երկարաժամկետ կամավորների տարբեր երկրներից: Նրանք ամիսներ շարունակ ապրում են Հայաստանում, աշխատում երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, վերականգնողական կենտրոնների, դպրոցների ու մշակութային հաստատությունների հետ՝ միաժամանակ փորձելով հասկանալ երկիրը, լեզուն եւ մարդկանց:

HUJ-ի միջազգային ծրագրերի համակարգող **Արփի Աղբալյանը** պատմում է. այսօր կազմակերպությունն ունի 15 կամավոր՝ Ֆրանսիայից, Իտալիայից, Գերմանիայից, Լեհաստանից եւ Սլովակիայից: Նրանց մեծ մասը Հայաստանում է առնվազն վեց ամսով, ոմանք՝ մեկ տարով:

«Խումբը, որը հիմա իր ծրագրի ավարտին է մոտենում, արդեն երկար ժամանակ Հայաստանում է ապրում: Մյուս խումբը նոր է եկել: Կամավորներից երկուսը աշխատում են հենց HUJ-ի գրասենյակում, մյուսները՝ մանկապարտեզում, մանկական վերականգնողական կենտրոնում, դպրոցում, պատմության թանգարանում, Հայաստանի ազգային պատկերասրահում, «Արաբկիր» ու «Մուրացան» բժշկական համալիրներում, Բուսաբանական այգում եւ այլն: Գրեթե բոլորի աշխատանքը կապված է երեխաների հետ»,- ասում է նա:

Աղբալյանի խոսքով, հատկապես այս խմբի կամավորները բավական արագ են հաղթահարել լեզվական ու մշակութային պատնեշները: Նրանք հայերեն են սովորում, շրջում երկրով, հաճախում մշակութային միջոցառումների, այցելում տեսարժան վայրեր. **«Փորձում ենք այնպես անել, որ իրենք ոչ միայն աշխատեն, այլ նաեւ սիրեն Հայաստանը: Կարծում եմ՝ ադապտացիոն շրջանը շատ լավ է անցնում:»**

«ՈՉ ԵՍ ՀԱՅԵՐԵՆ ԳԻՏԵԻ, ՈՉ ԻՐԵՆՔ՝ ՖՐԱՆՍԵՐԵՆ, ՍԿՍԵՑԻՆՔ ՀԱՄԿԱՆԱԼ ԻՐԱՐ ՆՈՒՅՆԻՍԿ ԱՌԱՆՑ ԲԱՌԵՐԻ»

Գերմանիայից ժամանած **Էմիլ Մաքսեին** աշխատում է «Հանրապետական մանկական վերականգնողական կենտրոնում»: Նրա առօրյան կապված է երեխաների եւ վիրավոր զինվորների հետ:

«Ֆիզիկական եւ ջրային թերապիայի ծրագրերի մեջ եմ ներգրավված: Ամեն օր մարդկանց հետ աշխատելն ինձ շատ բան է սովորեցնում՝ հատկապես համբերություն ու վստահություն»,- ասում է նա:

Յոհաննա Ջեսիկա Շմիդը նույնպես Գերմանիայից է եւ կամավորություն է անում Հայաստանի պատմության թանգարանում: Նա օգնում է կրթական ծրագրերի կազմակերպմանը, երեխաների համար անցկացվող էքսկուրսիաներին, երբեմն նաեւ անգլերենով բացատրություններ է տալիս դպրոցների աշակերտներին:

Մյուս գերմանացի կամավորը՝ **Կարլինա Բրիտտա Կելլները**, կամավոր է Երեւանի Նիկողայոս Տիգրանյանի անվան Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցում: Նա երեխաներին օգնում է անգլերենի, ֆիզկուլտուրայի դասերին, նաեւ նկարում ու ձեռքի աշխատանքներ է անում նրանց հետ:

Իտալացի **Մարկո Մաներան** կամավորություն է անում «Ձեր Գիտակ» մանկապարտեզում, որտեղ հաճախում են նաեւ աուտիզմ եւ զարգացման այլ խնդիրներ ունեցող երեխաներ:

«Երբեմն օգնում եմ դաստիարակներին, երբեմն երեխաների հետ անգլերեն կամ մաթեմատիկա ենք պարապում: Բայց ամենակարեւորը՝ նրանց կողքին լինելն է»,- ասում է նա:

Ֆրանսիացի **Նոա Ներիսոնի** աշխատանքային օրը անցնում է Երեւանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոնում: Այստեղ ապրում են տարբեր ճակատագրեր ունեցող երեխաներ՝ սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքներից, հաշմանդամություն ունեցող կամ ծնողական խնամքից զրկված:

«Երեխաների հետ խաղում ենք, նկարում, շախմատ խաղում: Ֆրանսերեն եմ սովորեցնում: Սկզբում շատ դժվար էր շփվելը, որովհետեւ ո՛չ ես հայերեն գիտեի, ո՛չ իրենք՝ ֆրանսերեն: Բայց ժամանակի ընթացքում սկսեցինք հասկանալ իրար՝ նույնիսկ առանց բառերի»,- պատմում է Նոան:

HUJ-ի գրասենյակում կամավոր է իտալացի **Ջուլիա Բրոկկին,** որը ներգրավված է կազմակերպչական գործընթացներում՝ ճամբարների, միջազգային համագործակցության, կամավորների դիմումների համակարգման մեջ:

«Սա այն տեղն է, որտեղ տեսնում ես՝ ինչպես են կառուցվում միջազգային ծրագրերը ներսից: Դա շատ հետաքրքրական փորձառություն է»,- ասում է նա:

Լեհաստանից ժամանած **Վիկտոր Սիակասը,** որը եւս HUJ-ի գրասենյակում է կամավոր, խոստովանում է՝ Հայաստան գալու որոշումն ընդունել է, որովհետեւ ուզում էր դուրս գալ իր «հարմարավետ գոտուց»:

«Ուզում էի մի երկիր, որը Եվրոպական միությունից դուրս է, մի քիչ ավելի տարբեր, ավելի էկզոտիկ: Բայց այստեղ նաեւ ինչ-որ ծանոթ բան գտա: Հայաստանը մի քիչ հիշեցնում է թե՛ Լեհաստանը, թե՛ Հունաստանը: Իսկ ես ունեմ լեհական ու հունական արմատներ: Հայաստանը, կարծես, երկու աշխարհների խառնուրդ լինի»,- ասում է նա:

ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՄԵՆԱՀԱՃԱԽ ԿՐԿՆՎՈՂ ԲԱՌԸ «ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆՆ» Է

Էմիլը հիշում է, թե ինչպես էր նոր ժամանել Հայաստան, երբ ավտոբուսում օգնել էր ծանր պայուսակներով մի տարեց մարդու: Վերջինս նրան հրավիրել էր տուն:

«Սկզբում գրեթե չէինք հասկանում իրար: Մի քիչ հայերեն, մի քիչ ժեստերով էինք խոսում: Հետո սեղան բացեցին, օղի բերեցին, խմեցինք, որից հետո թվում էր՝ արդեն հասկանում ենք իրար»,- ծիծաղելով հիշում է նա:

Մարկոն պատմում է մի դեպք, երբ ուժեղ անձրեւի ժամանակ երեխաներից մեկի մայրը բառացիորեն նստեցրել է իրեն մեքենան ու տարել տուն՝ ընթրիքի. **«Անունս էլ չգիտեին: Պարզապես գիտեին, որ իրենց երեխայի կամավոր ուսուցիչն եմ: Բայց ընդունեցին այնպես, կարծես ընտանիքի անդամ լինեի»:**

Յոհաննան հիշում է, թե ինչպես էին իրենք ընկերուհու հետ Հրազդանի մարզադաշտի հարակից տարածքից մեծ հայկական գորգ գնել եւ հանրային տրանսպորտով տարել հանրակացարան. **«Մարդիկ ավտոբուսում օգնում էին, ճանապարհին կանգնած տղաները օգնեցին գորգը բարձրացնել: Հիմա այդ գորգը մեր հանրակացարանում է: Հետո կմնա մյուս կամավորներին»:**

Հայերեն սովորելը, ասում են բոլորը, դարձել է ոչ միայն անհրաժեշտություն, այլեւ Հայաստանի հանդեպ հարգանքի ձեւ:

Մարկոն խոստովանում է՝ իր աշխատավայրում գրեթե ոչ ոք անգլերեն չի խոսում, եւ ինքը պարզապես այլ տարբերակ չի ունեցել. **«Կա՛մ պիտի հայերեն սովորեի, կա՛մ ոչ մեկին չհասկանայի: Ես ուզում էի մարդկանց հետ իրենց լեզվով խոսել: Դա Հայաստանի հանդեպ հարգանքի իմ ձեւն է»:**

Յոհաննան հիշում է իր առաջին սովորած հայերեն բառը՝ «պատմություն»: **«Թանգարանում անընդհատ ցույց էին տալիս ու ասում՝ սա պատմություն է, սա էլ է պատմություն: Այդպես սովորեցի»**:

Նոան էլ ասում է՝ երեխաների հետ շփումն է իրեն ամենաշատը ստիպել սովորել լեզուն. **«Սկզբում Google Translate էի օգտագործում, հիմա արդեն շատ բան հասկանում եմ առանց թարգմանչի»:**

«ԱՐԱՐԱՏԸ ՏԵՄՆՈՂԸ ՄԻՇՏ ՈՒՂՈՒՄ Է ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ»

Շատերի համար Հայաստանը սկզբում եղել է պարզապես քարտեզի վրա նշված երկիր: Բայց հետո դարձել է մի վայր, որի հետ ձեւավորվել է անձնական կապ, մտերմություն: ⇨8

«Թրամփի ուղին»... խնդիր նաեւ Եվրոպայի համար

Իրանում իր անհաջողության վրեժը լուծելու համար ԱՄՆ-ին Հայաստանի տարածքն է պետք

*Լեհական «**Միսլ Պոլսկա**» շաբաթաթերթի թարգմանաբար ներկայացվող այս հոդվածը հրապարակվել է ապրիլի 29-ին, բայց կարծում ենք՝ դրա հիմնական հարցադրումները մնում են խորհրդածության արժանի:*

*Հոդվածի հեղինակ՝ **Տոմաշ Յանկովսկի**:*

Եվրոհանձնաժողովը եւ ԵՄ երկրների առաջնորդներն ուշադիր հետեւում են Հորմուզի նեղուցի շուրջ տեղի ունեցող իրադարձություններին: Բայց նույն այդ ժամանակ Իրանից հյուսիս, կամ ավելի ճշգրիտ՝ Կովկասում, զարգանում են նախագծեր, որոնք կարող են ավելի մեծ հարված հասցնել Եվրոպային:

«Ենի» էներգետիկ ընկերության նախագահը վերջերս խոստովանեց, որ ԵՄ-ին պակասում են գազի այլընտրանքային մատակարարներ: Միեւնույն ժամանակ Հարավային Կովկասում ստեղծվում է մի երթուղի, որն էլ ավելի կսահմանափակի Եվրոպայի մուտքը վառելիքի աղբյուրներ եւ կնվազեցնի այնտեղ տանող ուղիների թողունակությունը:

Խաղաղությունից պատերազմ

Շատերը տարակուսում էին, թե ինչու **Դոնալդ Թրամփին** հարկավոր եղավ ներգրավվել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության լուծման գործում: Քչերն էին հավատում, որ նա անկեղծորեն ձգտում է կատարել մոլորակի վրա որքան հնարավոր է շատ պատերազմներ դադարեցնելու իր խոստումը: Իսկ չէ՞ որ Հարավային Կովկասը ո՛չ նավթ ունի, ո՛չ գազ, ռեսուրսներ՝ որոնց նկատմամբ վերահսկողության համար Ամերիկան տասնամյակներ շարունակ կատաղի պայքար է մղում ամբողջ աշխարհում: Այդ դեպքում ինչո՞ւ Վաշինգտոնն այդքան մտահոգվեց այնպիսի ոչ մեծ երկրներով, որոնք կարեւոր են Ռուսաստանի եւ Թուրքիայի, բայց թվում էր՝ ամենեւին ո՛չ Ամերիկայի համար:

Հայաստանին եւ Ադրբեջանին համոզելով համաձայնագիր կնքել՝ ԱՄՆ նախագահն առաջարկեց գործարկել տրանսպորտային նախագիծ՝ օգտագործելով Զանգեզուրի «միջանցքը» (չակերտը մերն է - Գ. Մ.)՝ հայկական հողատարածքի մի շերտ Ադրբեջանի եւ նրա էքսկլավ Նախիջեւանի միջեւ: Ծրագրի հեղինակներն այն անվանում են անգլերեն հապավմամբ TRIPP, որը նշանակում է «Թրամփի ուղի միջազգային խաղաղության եւ բարգավաճման համար»: Փորձագետներն ու լրագրողները գլխավորապես գովաբանում են դրա առեւտրային ներուժը: Այս ուղին պետք է դառնա Եվրոպան եւ Ասիան Թուրքիայի միջոցով կապող նոր զարկերակ: Եվ սա իսկապես կարող է մեծ շահույթներ բերել:

Սակայն առեւտուրը միայն սառցալեռան վերին մասն է: Հատուկ անվնաս անվան ներքո թաքնված են չարամիտ ծրագրեր, որոնք դժվար թե խաղաղություն բերեն տարածաշրջանին: ԱՄՆ-ի՝ այս տարածքներում ծավալվելու հիմնական խոչընդոտը երկար ժամանակ եղել են Ասիա ներթափանցելու հնարավորության բացակայությունն ու այլ տերությունների, հատկապես՝ Չինաստանի եւ Ռուսաստանի դիմադրությունը, որոնք նման ծրագրերում տեսնում էին սպառնալիք իրենց անվտանգության եւ տնտեսության համար: Իրանի հետ պատերազմը ցույց տվեց, որ ծովից հարվածներ հասցնելու Ամերիկայի հնարավորություններն այնքան մեծ չեն, որքան նա կցանկանար: Նույնիսկ միջին հակառակորդի հետ հակամարտության դեպքում նավատորմն առանձնապես մեծ առավելություն չի տալիս, եթե այդ հակառակորդն ակնապատում է իր ափամերձ գիծը: Եթե Թրամփը կարողանար Իրանի վրա գրոհել ցամաքից, Պենտագոնը դժվարին իրավիճակում չէր հայտնվի:

Իրանով դեպի Եվրասիա

Իրանի հետ պատերազմից կարճ ժամանակ առաջ ԹՐԻՓՓ հայեցակարգի ի հայտ գալը պատահական չէր: Ճանապարհը նախատեսվում է կառուցել հայ-իրանական սահմանից ոչ հեռու: Դա Միացյալ Նահանգներին հենատարածք է տալիս Իրանի Իսլամական Հանրապետության հյուսիսում ցամաքային ներկայության համար: Դրանով Ամերիկան կարող է Իրանը գրոհել երկու հակադիր ուղղություններից՝ հյուսիսային ցամաքային սահմանը շատ ավելի մոտ է Թեհրանին, քան հարավային՝ ծովայինը:

Ամերիկյան ներկայությունը Հարավային Կովկասում խախտում է ուժերի հավասարակշռությունը, իսկ նման փոփոխությունները երբեք խաղաղ տեղի չեն ունենում: ԱՄՆ-ի տեղավորվելը Հայաստանում՝ սպառնում է ոչ միայն Իրանի, այլ նաեւ Թուրքիայի, Ռուսաստանի ու նույնիսկ Չինաստանի շահերին: **Զբիգնեւ Բժեզինսկին**՝ ամենահայտնի բազեներից մեկը, Լինդոն Ջոնսոնի եւ Ջիմի Քարտերի խորհրդականը, ժամանակին ծավալապաշտական հայացքով էր նայել այս տարածաշրջանին իր «Մեծ շախմատի տախտակ» գրքում: Դրանում նա Կովկասն անվանել էր «Եվրասիական Բալկաններ», հսկայական աշխարհաքաղաքական ազդեցության եւ նույնքան հսկայական հարստության դարպաս: Նրա կարծիքով այս հայեցակարգում Ադրբեջանը հատկապես կարեւոր էր. այն կարող էր Միջին Ասիայից Եվրոպա տեղափոխել նավթ եւ գազ՝ շրջանցելով Ռուսաստանը:

Թրամփը, փորձելով տարանցիկ երթուղի բացել Ադրբեջանի երկու մասերի միջեւ, անշեղորեն հետեւում է Բժեզինսկու տրամաբանությանը: Սակայն այս հողշերտը շատ ավելին է նշանակում, քան պարզապես առեւտրային ուղին: Զանգեզուրի «միջանցքը», ըստ էության, ՆԱՏՕ-ից դեպի Կենտրոնական Ասիա ուղիղ ճանապարհ է: Այն նոր հնարավորություններ է բացում ռազմական լոգիստիկայի համար՝ Ղազախստանը, Ուզբեկստանը եւ Թուրքմենստանը ապակայունացնելու հնարավոր գործողությունների շրջանակներում: Այս ուղին իդեալական է Ռուսաստանին եւ Չինաստանին իրենց, թվում էր թե, անվտանգ թիկունքում սպառնալու համար: Մոսկվան եւ Պեկինը հրաշալի հասկանում են՝ դա ինչ կարող է արժենալ:

Դա ոչ մեկին դուր չի գա: Բացի Ամերիկայից

Թուրքերի համար վտանգն ավելի մեծ է: Չնայած Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, այն վարում է հարաբերականորեն անկախ քաղաքականություն: Անկարան չի ցանկանում, որ ամերիկյան զորքերն ընդլայնեն ներկայությունն իր ետնաբակում: Նա չի ցանկանում, որ Վաշինգտոնը ոչնչացնի Իրանը եւ անկայունացնի իր արեւելյան սահմանները: Նման ցնցումներից հետո Թուրքիան ստիպված կլինի հրաժեշտ տալ իր աշխարհաքաղաքական հավակնություններին եւ ենթարկվել Վաշինգտոնի ցանկացած ճնշման: Ամերիկա-իրանյան հակամարտությունը դեռ հեռու է ավարտից: Սպիտակ տունը չի կարողացել հաղթահարել ակնհայտորեն ավելի թույլ քաղաքական միավորին եւ հակամարտությունը մղել է փակուղի: Ամերիկան նվաստացած դուրս եկավ: Ոչ մի հայտարարված նպատակ այդպես էլ չի իրականացվել: Գերագույն առաջնորդի փոփոխությունը նույնպես չի հանգեցրել քաղաքական փոփոխությունների. Թեհրանը պահպանել է կայունությունն ու հակաամերիկյան ուղեգիծը, ու այժմ նաեւ վերահսկում է Պարսից ծոցի՝ աշխարհի գլխավոր նավթային նավահանգստի մուտքը:

ԱՄՆ-ն այս հակամարտությունում ինչ-ինչ աղետալի կորուստներ չի կրել: Սա նշանակում է, որ այն դեռ ռեւանշի ուժեր ունի: Բայց դրա համար նրան հարկավոր է Հայաստանի տարածքը: ԹՐԻՓՓ-ից բացի ԱՄՆ-ն Երեւանին առաջարկել է ատոմակայանի եւ տվյալների մշակման հսկայական կենտրոնի կառուցում: Չափազանցություն չի լինի ենթադրել, որ տարածաշրջանային տերության հետ հակամարտության դեպքում ամերիկացիները կօգտագործեն այս ենթակառուցվածքը իրենց նպատակների համար՝ այն դարձնելով հրթիռային հարվածների թիրախ, առաջին հերթին՝ Իրանի կողմից: Առավել եւս, որ Իսլամական Հանրապետությունը նման տվյալների կենտրոնները համարում է լիովին օրինական թիրախներ: Հայաստանը շատ ավելի փոքր է, քան Միացյալ Արաբական էմիրությունները, առավել եւս՝ Սաուդյան Արաբիան: Հրթիռային եւ հրետանային ցանկացած փոխադարձ հարվածներ անմիջականորեն կդառնային հարվածներ նրա քաղաքացիներին, որոնք ոչ մի տեղ չէին ունենա փախչելու, ոչ մի տեղ՝ թաքնվելու: ԱՄՆ-ի էքսպանսիան երկիրը կվերածեր փորձադաշտի:

Բայց եւ Եվրոպայի համար էլ հետեւանքները ոչ պակաս ծանր կլինեն: ԵՄ-ն իր գազի զգալի մասը գնում է Ղազախստանից, ընդ որում ներմուծման մի մասը գալիս է Հարավային Կովկասով: Սա ԱՄՆ ռազմածովային ուժերի կողմից չվերահսկվող մնացած վերջին միջանցքն էր: Հիմա այն նույնպես կփակվի: Ամերիկացիները կսահմանեն էներգակիրների գները Եվրոպայում:

Անհրաժեշտության դեպքում նրանք կարող են անգամ արգելափակել Եվրոպայի կապերը Չինաստանի եւ ասիական շուկաների հետ: ԹՐԻՓՓ նախագիծը եւս մի հզոր քարաբլոկ է «Մեծ ամերիկյան պատին»՝ հակամարտության գոտիների եւ ռազմական բազաների այն շղթային, որն ԱՄՆ-ին թույլ կտա փակել Եվրոպա տանող բոլոր ճանապարհները: Եվրոմիությունը պետք է կանխի սա՝ թե՛ տարածաշրջանային խաղաղության, թե՛ ապագայում իր գոյատեւման համար:

Թարգմանեց ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆԸ

Նրանք եկել էին ՀՍՀ...

⇨7 Կարլինան պատմում է, որ տարիներ առաջ պատահաբար էր հանդիպել Հայաստանի մասին տեղեկությունների եւ սկսել հետաքրքրվել. **«Հետո սկսեցի հայկական երաժշտություն լսել, ֆիլմեր նայել, պատմություն կարդալ: Covid-ը խանգարեց գալ, բայց մտադրությունը երբեք չփոխվեց: Ես սիրահարվել էի Հայաստանին»:**

Մարկոն ասում է, որ առաջինը հետաքրքրվել է Հայոց ցեղասպանության եւ Արցախի պատմությամբ. **«Հետո հասկացա, որ Հայաստանը շատ ավելի խորն ու բարդ երկիր է, քան պատկերացնում էի»:**

Էմիլն էլ խոստովանում է՝ մինչեւ գալը Հայաստանի մասին գրեթե ոչինչ չգիտեր. **«Գուցե հենց դա էր հետաքրքիր: Ամեն ինչ նոր էր ինձ համար»:**

Ի դեպ, կամավորների առօրյան միայն աշխատանքով չի սահմանափակվում: Նրանք ճանապարհորդում են, մարզվում, հայկական պարեր սովորում, ֆիլմեր դիտում, քաղաքում ընկերներ գտնում:

Էմիլը սիրում է քաղաքից դուրս գնալ եւ բացահայտել Հայաստանը: Մարկոն՝ վոլեյբոլ խաղալ ու ճանապարհորդել: Կարլինան սկսել է հայկական պարի դասերի հաճախել: Յոհաննան սիրում է ժամերով մնալ քաղաքի կենտրոնում՝ սպասելով մինչեւ երթեւեկության թեթեւանալը: Բայց ամենակարեւոր հարցը, թերեւս, այն է, թե կվերադառնա՞ն կրկին Հայաստան: Գրեթե բոլորը առանց երկար մտածելու ասում են՝ այո:

«Արարատը տեսնողը միշտ ուզում է վերադառնալ»,- ասում է Յոհաննան:

Էմիլը արդեն հրավիրված է հայկական հարսանիքի: Նոան ուզում է Հայաստան բերել իր մորը: Վիկտորը վստահ է՝ այստեղից տանելու է ոչ միայն հիշողություններ, այլեւ կյանքի նոր փորձ. **«Երբ տնից հեռու ես ու լրիվ նոր բան ես անում, հասկանում ես՝ որքան ես փոխվել»:**

Թերեւս հենց սա է կամավորության ամենակարեւոր արդյունքը: Ոչ միայն այն, որ ինչ-որ մեկը գալիս է օգնելու, այլ նաեւ այն, որ այդ ճանապարհին ինքն է փոխվում: Եվ հաճախ՝ ընդմիշտ:

ՀՐԱՆՏ ՍԱՐԱՖՅԱՆ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան Լե տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն((գովազդ)
հեռ..**091 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 21.05.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 500 օրինակ, տպագրում է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատանը, ք. Երեւան, Բաղրամյան 3: